Այնժամ Հիսուսը եկավ և կանչեց

Հովհաննու Ավետարան, 11–րդ գլուխ, կուզենայի կարդալ 18–րդ համարից սկսած.

Արդ, Բեթանիան Երուսաղեմին մոտ էր, մոտ տասնհինգ ասպարեզի հեռավորությամբ:

Եվ հրեաներից շատերը եկել էին Մարթայի և Մարիամի մոտ, որպեսզի նրանց մխիթարեն իրենց եղբոր համար:

Երբ Մարթան լսեց, թե Հիսուսը գալիս է, անմիջապես գնաց և դիմավորեց Նրան, բայց Մարիամը դեռ տանը նստած էր:

Եվ Մարթան ասաց Հիսուսին. «Տե՛ր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի:

Բայց ես գիտեմ, որ նույնիսկ հիմա, Դու ինչ որ Աստծուց խնդրես, Աստված կտա Քեզ»:

Հիսուսը նրան ասաց. «Քո եղբայրը հարություն պիտի առնի»:

Մարթան Նրան ասաց. «Ես գիտեմ, որ Նա հարություն պիտի առնի հարության ժամանակ՝ վերջին օրում»:

Հիսուսը նրան ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը. ով հավատում է Ինձ, թեև մեռնի, պիտի՛ ապրի:

Եվ ով ապրում է և հավատում է Ինձ, երբեք պիտի չմեռնի: Դու հավատո՞ւմ ես սրան»:

Նա ասաց Նրան. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ Դու Քրիստոսն ես, Աստծո Որդին, որ աշխարհ պիտի գար»: (Եվ հետևե՛ք դրան):

Հետո, երբ այս ասաց, գնաց, թաքուն կանչեց իր քրոջը՝ Մարիամին և ասաց. «Վարդապետը եկել է և կանչում է քեզ»:

2 Աղոթենք: Երկնային Հայր հաստատի՛ր այդ Խոսքերը մեր սրտերում այս երեկո, քանի որ մենք հիմա Քեզանից ենք ակնկալում: Քո Խոսքը, Քո ծառան, ինչպես նաև

տեքստը՝ ամենը հանձնում ենք Քեզ Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

Կարող եք նստել:

3 Այստեղ գտնվելու իմ նպատակն է փորձել օգնել Աստծո ժողովրդին: Ոչ այնքան, որ աղոթեմ և ձեռքերս դնեմ հիվանդների վրա, այլ, որ նրանք կարողանան ճանաչել Հիսուս Քրիստոսին մեր մեջ, Աստծո Որդուն մեր մեջ: Այսօր մենք կխոսենք այս թեմայով՝ *«Այնժամ Հիսուսը եկավ և կանչեց»:*

4 Այս ժամանակը, որի մասին մենք հիմա խոսում ենք, շատ տխուր ժամանակ էր: Եթե երբևէ կարդացե՞լ եք պատմությունը մեր Տիրոջ կյանքից, ապա մենք տեսնում ենք, որ Նա հիանալի Ընկերն էր Ղազարոսի համար: Նա...Հովսեփից հեռանալուց հետո, այսինքն՝ Նա լքեց և եկավ ապրելու Մարթայի, Մարիամի և Ղազարոսի հետ: Եվ նրանք հրաշալի ընկերներ էին: Նրանք...Նա նրանց համար հովվի պես էր, իսկական Ընկեր: Եվ նրանք հագնելու բաներ էին կարում Նրա համար, վերարկու, կարծում եմ, և պնդում եմ, որ այն ամբողջական կտորից էր առանց կարերի: Բացի այդ, նրանք ինչ-որ բաներ էին անում Նրա համար, որովհետև հավատում էին Նրան: Այդ նրանք, նրանք էին, որ հավատում և տեսնում էին դա: Նրանք թողել էին եկեղեցին և այլն՝ Նրան հետևելու համար: Այն ժամանակ դա մեծ բան էր, ինչը կարող էր նույնիսկ պատժվել մահով, ժողովարանից հեռանալու համար:

5 Բայց Հիսուսը՝ այս Մարդը, ով շրջում էր, ինչպես նրանք էին պնդում, պատռելով իրենց եկեղեցիները, և վատ բաներ էր ասում նրանց քահանաների մասին, և, և այլն, Նա, Նա մեծ վնաս էր պատճառում իրենց, կարծում էին նրանք: Եվ, և նույնիսկ Նրան դավանելը՝ նշանակում էր ժողովարաններից դուրս վռնդվել: Հետևաբար եթե դու եկեղեցուց դուրս ես, նրանք, նրանք կարծում էին, որ փրկության հնարավորություն չունես: Եթե նրանց աղանդներից մեկին չէիր պատկանում, ինչպես օրինակ՝ փարիսեցիներին, սադուկեցիներին կամ նման մի բանի, ուրեմն փրկություն չկար քեզ համար, եթե դրանից դուրս էիր գտնվում: Եվ եթե նրանք իրավունք ունեին, բանալիներ, կարող էին էլ պարզապես դուրս վռնդել քեզ ժողովարանից, եթե ցանկանային: Դա իրենց սեփական ասույթն էր: Զարմանալի չէ, որ Հիսուսն ասաց. «Դուք ձեր

ավանդույթով ի չիք եք դարձրել Աստծո Խոսքը»: Տեսնո՞ւմ եք:

6 Եվ հիմա դա նորից է կրկնվում, որովհետև մենք բոլորս էլ գիտենք, որ պատմությունը երբեմն կրկնվում է: Տխուր է դա, դա ասել, բայց մարգարեություն էր եղել, որ կրկնվելու է, և դա այդպես էլ եղավ:

Մենք տեսնում ենք, որ Հիսուսի մասին լավ կարծիք չունեին:

7 Շատ հաճախ մարդիկ ուզում են դատել այն մարդուն, ով չի համաձայնվում իրենց հետ: Մենք չենք ուզում այդպես վարվել: Մենք կարող ենք միմյանց հետ չհամաձայնվել, այնուհանդերձ ընկերական լինել: Եթե ես չեմ կարող համաձայնվել մի մարդու հետ, և այնուամենայնիվ սիրեմ և աղոթեմ նրա համար, բայց համաձայն չեմ նրա հետ...նրա հետ Սուրբ Գրքի հիման վրա ավելի լավ լուսավորության պատճառով, այդ դեպքում ես ոչինչ չեմ ասի նրան: Ես միշտ ընկերական ձևով եմ ուզում չհամաձանվել նրա հետ, որովհետև սիրում եմ նրան, և, ես, ես, իհարկե, չեմ ուզում, որ նա կորչի: Նույնն էլ պետք է նա անի իմ պարագայում, որովհետև մենք չենք ուզում կորսվել: Եվ մենք պետք է հիմնենք մեր մտքերն այն բանի վրա, ինչ Խոսքն է ասում: Թող Խոսքը ճշմարիտ լինի: Ոչ թե մեր հավատամքը կամ ինչպիսին են մեր մտքերը, այլ, թե ինչ է ասում Նա, ոչ մի անձնական մեկնություն, միայն այն, ինչ Խոսքն է ասում:

8 Վերջերս ես մի բան արեցի և դա գրեթե սրբապղծություն թված, կարծեմ դա նախորդ առավոտյան էր ծառայողական նախաճաշի ժամանակ: Ես Հիսուսին դատի ենթարկեցի: Ասացի. «Ճիշտ այնպես, ինչպես նրանք արեցին այն ժամանակ, այդպես էլ անում են այսօր»: Միգուցե լավ կլինի, եթե ես դա մի րոպեյով կրկնեմ, եթե ժամանակ ունենք: Հիմա, ես ասացի, որ մենք այսօր տեսնում ենք, որ...

9 Լյութերական ռեֆորմացիայի մեջ, նա դրա ժամանակ ասում էր, որ արդարը հավատքով կապրի: «Այն մարդը, ով հավատում է, հենց նա ունի Դա»: Բայց մենք պարզեցինք, որ նրանցից շատերն ասում էին, որ հավատում են և չունեին Դա:

10 Ջոն Ուեսլիի օրերում եթե նրանք ստանում էին երկրորդ օրհնությունը, նրանք դա անվանում էին սրբացում՝ ամբողջական սրբացում, ուրախանում և

աղաղակում էին: «Բոլոր աղաղակողներն ունեին Դա»: Բայց նրանք տեսան, որ չունեին Դա: Նրանցից շատերն աղաղակում էին և չունեին Դա:

11 Պենտեկոստեի օրեր: Նրանք ասում էին. «Հիմա եկել է պարգևների վերականգնումը, Հոգով մկրտությունը: Ով խոսում է լեզուներով, ստացել է Դա»: Մենք տեսանք, որ շատերը խոսում էին լեզուներով և չունեին Դա:

12 Ուստի նրանք ասում են. «Դե, Հոգու պտուղ, ահա թե ինչ է Դա»: Ո՛հ, ոչ, ոչ թե Հոգու պտուղը: Քրիստոնեական Գիտությունը ունի դա, որտեղ համարյա...Սերը Հոգու պտուղն է: Այդ դեպքում նրանք ավելի շատ սեր ունեն, քան որևէ մեկը, և ժխտում են Հիսուս Քրիստոսի Աստվածությունը, պարզապես Նրան մարգարե են համարում, սովորական մարդ: Հասկանո՞ւմ եք: Ուստի դա դրա հետ ոչ մի կապ չունի:

13 Թո՛ւյլ տվեք մի րոպեյով հարցականի տակ դնել դա: Եկե՛ք դատի ենթարկենք Հիսուսին: Թող Աստված ների ինձ հարթակից կատարած այս հայտարարության համար, բայց ես մի րոպեյով դեմ կլինեմ Նրան՝ պարզապես ձեզ դեպի Լույսը բերելու համար: Հասկանո՞ւմ եք:

14 «Հիմա ես այսօր հավաքել եմ ձեզ այստեղ. ես դիմում եմ ձեզ: Ես...»: (Դա անցյալում է, երբ Նազովրեցի Հիսուսը երկրի վրա էր): «Ես եկել եմ ձեզ մոտ, որ ձեզ հետ միասին առարկեմ այս մարդուն՝ Նազովրեցի Հիսուսին: Հիմա, մենք բոլորս էլ գիտենք, որ Աստված սեր: Սուրբ Գիրքն է այդպես ասում: Շատ լավ, և սերը...Հոգին համբերատար է, քաղցր է, ժուժկալ է, հեզ է և այլն, սեր է: Հիմա ես ասում եմ...ես ուզում եմ ձեզ մի բան հարցնել: Մենք կվերցնենք այն, այն, ինչ գիտենք, քրիստոնեային»:

15 «Նայե՛ք ձեր այդ ծեր քահանային: Նրա նախա-նախա-նախա-նախապապը քահանա է եղել: Քահանա դառնալու համար Նա պետք է Ղևտացիների այդ տոհմում ծնված լիներ: Մենք հիմա պարզում ենք, որ նա ձեր՝ մնացածների պես երիտասարդի կյանք չի ունեցել: Ի՞նչ է անում նա: Զոհում է իրեն, նա այնտեղ է՝ ուսումնասիրելու համար Խոսքը՝ Աստծո Խոսքը: Նա գիշեր-ցերեկ, գիշեր-ցերեկ անցնում է դրա վրայով, պետք է դրա ամեն մի տառը, գլանակի վրա գրված ամեն բառն իմանա: Նա պետք է անգիր իմանա: Նա, նա պարզապես ցանկացած բան դրա մասին պետք է իմանա»:

16 «Հետո, բացի դրանից, երբ ձեր հայրիկն ու մայրիկը ամուսնացան, ո՞վ իրենց միացրեց որպես կին և ամուսին»: Ձեր բարեպաշտ ծեր քահանան: Ո՞վ էր, որ եկավ ձեր հայրիկի մոտ, երբ ինքը կարիքի մեջ էր և իր ագարակի համար գումար էր պարտք, որը վարկատուները պատրաստվում էին վերցնել: Ո՞վ կանգնեց նրա կողքին: Ձեր բարի ծեր քահանան: Ո՞վ կանգնեց այնտեղ՝ սենյակում ձեր մայրիկի կողքին, երբ ինքը լույս աշխարհ էր բերում ձեզ: Բարի ծեր քահանան: Ո՞վ է գալիս ձեզ մոտ, երբ հիվանդ ու կարիքավոր եք: Ձեր բարի ծեր քահանան: Ո՞վ էր, որ ձեզ օրհնեց և հանձնեց Աստծուն, և ութերորդ օրը թլփատեց: Ձեր բարի ծեր քահանան: Երբ ձեր հայրիկն ու մայրիկը բաժանվելու վրա էին, ո՞վ նորից հաշտեցրեց, ամուր պահեց նրանց: Ձեր բարի ծեր քահանան: Երբ մոտակայքում խնդիր է լինում, ո՞վ է հոգում դրա մասին: Ձեր բարի ծեր քահանան: Անկասկած»:

17 «Հիմա այս բարի ծեր քահանան գիտի, որ Աստվածաշունչն ասում է, որ Աստված զոհաբերության համար գառ է պահանջում: Ձեզանից շատերը գործարարներ են, ուստի դուք ոչխարներ չեք բուծում, մինչդեռ Աստված ոչխար է պահանջում: Նրանք տաղավարներ էին շինել այնտեղ և վաճառում էին իրենց ոչխարներին, որ գործարարները կարողանան գնալ ու գնել դրանք, որ իրենց անձի համար զոհ մատուցեն, որն Աստված է պահանջում»:

18 «Իսկ ի՞նչ արեց այս երիտասարդը, որ Հիսուս էր կոչվում: Որտեղի՞ց էր Նա եկել: Ասում են, որ Նա կուսական ծննդով է ծնվել: Ո՞վ է երբևիցե այդպիսի անհեթեթության մասին լսել: Մենք գիտենք, որ Նրա մայրը Նրան աշխարհ է բերել, մինչև նրա և Հովսեփի ծնունդը, այսինքն՝ նրա և Հովսեփի ամուսնությունը, Նա ծնվել է: Մենք հիմա պարզում ենք, որ Նա, Նա նախ վատ համբավ ուներ»:

19 «Ի՞նչ անդամատոմս ունի Նա: Եթե Նա բարեպաշտ մարդ էր, ո՞ր խմբին էր միացել: Այն ժամանակ, երբ ձեր քահանան, սովորում, սովորում, սովորում, սովորում էր այդ Խոսքն իմանալու համար: Ահա Նա շրջում է՝ քանդելով այն, ինչ վերջինս կառուցել էր: Դուք դա «Աստված» կանվանեի՞ք: Անշուշտ՝ ոչ»:

20 «Հիմա, վերջերս, երբ ձեր քահանան պատրաստեց այդ տեղը՝ այնտեղ, …որտեղից կարող էիք գնել գոհը, ի՞նչ

արեց այս երիտասարդը։ Հեզությո՞ւն։ Նա հարվածում էր, պարանից խարազան շինեց՝ քաթանից և կաշվից, և բարկացած հայացքով նայեց մարդկանց, շուռ տվեց այդ սեղանները և դուրս հանեց նրանց այնտեղից։ Եվ դուք դա Հոգու պտուղներ եք անվանո՞ւմ, բարկացած հայացքով էր նայում նրանց։ Եվ տեսե՛ք, զրկելով մարդուն Եհովային պաշտելու իր հնարավորությունից։ Գործարարը ուզում է պաշտել Նրան, նա գառներ չի բուծում, և գնացել էր այնտեղ՝ այն գնելու։ Իսկ Հիսուսը շուռ տվեց դա, ոտքով հարվածեց դրանք և դուրս հանեց նրանց»։

21 Ո՞վ այնտեղ Հոգու պտուղը ունի։ Ըհը։ Տեսնո՞ւմ եք։ Ահա՛, խնդրե՛մ։ Հասկանում եք, ո՛չ Հոգու պտուղ, ո՛չ լեզուներով խոսել և ո՛չ էլ աղաղակ։

22 Դուք ասում եք. «Այդ դեպքում Բրանհա՛մ եղբայր, ո՞րն է ապացույցը։ Ո՞րն է ապացույցը»։ Խոսքի հաստատումը տվյալ ժամում։

23 Նրանք ունեին Սուրբ Գիրքը։ Նա ճիշտ այն էր, ինչ Եհովան ասել էր, որ կատարվելու է։ Դա մեկնության կարիք չունի։ Այն մեկնաբանվեց այնտեղ։ Այնտեղ էին ձեր քահանաները, այնտեղ էր այն ամենը, ինչ նրանք ունեին և ամեն ինչում կարգ ու կանոն հաստատված և այլն, բայց և այնպես չկարողացան Խոսքը տեսնել։ Եվ Նա կենդանացրեց այդ Խոսքը տրված այդ ժամանակաշրջանի համար։ Դա էր այդ ժամանակաշրջանի ապացույցը։

24 Լյութերն ուներ իր ժամանակաշրջանի ապացույցը, Ուեսլեյն իր ժամանակաշրջանինը, հոգեգալստականները իրենց ժամանակաշրջանինը, բայց մենք ուրիշ ժամանակաշրջանում ենք գտնվում։ Այդ բաները լավ են։ Բայց ինչպես երեխան մատ, աչք, քիթ ունի, սակայն որոշ ժամանակ անց նա պետք է մարդ դառնա։ Պետք է հասուն երեխա դառնա, հետո ծնվի, ունենա շունչ, մարմին և հոգի, կարողանա շարժվել։

25 Հիմա մենք պարզում ենք դա, այս ամենը, Հիսուսը հայտարարեց, և ընդամենը մի քանիսը, միայն նրանք, ում Նա սահմանել էր Կյանքի համար, տեսան Նրան։ Ոչ թե մեծ ամբոխներ։ Նրա խումբը երբեք չէր կարող համեմատվել Կայափայի խմբերի հետ։ Կայափան կարող էր ամբողջ ազգը հավաքել։ Հիսուսը ընդամենը մի քանիսին հավաքեց։ Քչերն էին Նրան ճանաչում։

Հազարավորներ, երբ Նա երկրի վրա եկավ, անցավ դրա միջով, և նրանք նույնիսկ չիմացան, որ Նա այստեղ էր:

26 Այդպես է լինելու նորից: Նա գալու է նրանց մոտ, ովքեր կանչված են Կյանքի համար: Նա գիտի, թե ով է կանչված դրա համար: Եվ Նա չ...Սա Նրա գործն է հոգալ դրա մասին:

27 Արդ մենք նկատում ենք, որ նրանք դուրս եկան եկեղեցուց, և նրանք հավատացին Նրան: Այն ամենը, ինչ Խոսքն ասում էր Նրա մասին, Նա էր:

28 Եվ մի օր Նա գնաց իրենց տնից: Ես կուզեի խոսել երեք բաների մասին. Հիսուսը հեռացավ, մահը եկավ, բոլոր հույսերը մարեցին: Ես ուզում եմ մի քանի րոպե խոսել այս երեք բաների վերաբերյալ:

29 Հիսուսը հեռացավ: Եվ երբ Նա հեռացավ, փորձանքը եկավ: Երբ Նա լքում է ձեզ կամ այն տունը, ուր ապրում եք, փորձանքը ճանապարհին է: Սատանայի համար դուռը բաց է, երբ Հիսուսը հեռանում է:

30 Նա գնաց, և հենց, և հենց Նա գնաց, այդ ժամանակ մահը եկավ: Եվ երբ Հիսուսը դուրս է գալիս, մտնում է մահը: Նրանից բաժանվելը՝ մահ է, դրա համար մահը մտավ, երբ Հիսուսը դուրս եկավ:

31 Եվ մահը Ղազարոսի պարագայում հապաղեց: Եվ այդ ժամանակ Նա, ում նրանք հավատում և սիրում էին, մարդ ուղարկեցին Նրա մոտ, որպեսզի գա և աղոթի Ղազարոսի համար, որովհետև տեսել էին Նրան և գիտեին, որ Ինքը ճանաչում է Աստծուն, որ ինչ էլ որ Աստծուց...Մարթան արտահայտեց դա այնտեղ. «Ինչ էլ որ Աստծուց խնդրես հիմա, Աստված դա կիրականացնի»: Մարթան հասկացել էր, որ Նա և Աստված Մեկ էին: Նա ժամվա Խոսքն էր, դրա համար էլ նա ճանաչեց դա: Գիտեր նաև, որ եթե կարողանար հաղորդակցության մեջ մտնել Նրա հետ, բայց Նա գնացել էր, և նրանք չէին կարողացել պահել Նրան: Նրանք մարդ ուղարկեցին Նրան կանչելու, և գալու փոխարեն, Նա ավելի հեռվացավ: Հետո նորից մարդ ուղարկեցին, և գալու փոխարեն, ավելի հեռու գնաց:

32 Երբեմն մենք զարմանում ենք, թե ինչու են այդ բաները կատարվում, բայց մի՞թե Սուրբ Գիրքը չի ասում. *«Բոլոր բաները միասին բարուն են գործակից նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն»:* Նա գիտի, թե ինչ է անում: Եթե ուշացնում է, ամեն ինչ կարգին է: Նա գիտի՝ ինչ է անում: Այնտեղ որոշակի նպատակ կար:

33 Մենք պարզում ենք, որ Նա ասաց Հովհաննու Ավետարանի 5.19–ում. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս»:*

34 Հայրը Նրան ասել էր, որ գնա, և այնքան օրեր հեռու լինի: Այդ օրերը լրանալուց հետո, դրանից հետո Նա ասաց այն, ինչ Նա ասաց այդ ժամանակ, որ՝ «Մեր Ղազարոս բարեկամը քնեց»:

Եվ նա ասաց. «Ուրեմն կառողջանա»:

35 Նա ասաց. «Նա մեռավ: Եվ Ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չէի»: Որովհետև նրանք կփորձեին այնպես անել, որ Նա գնա նրա մոտ, որպեսզի բժշկի նրան կամ ասի, թե ինչ պետք է արվեր: Բայց Նա գիտեր, թե ինչ պետք է արվեր, դրա համար արեց ճիշտ այն, ինչ Նրան սահմանված էր անելու՝ բացակայել: Եթե ուշադրություն դարձրեցիք Նրան գերեզմանի մոտ, երբ Նա վերադարձավ: Նա արտահայտեց դա, երբ վերադարձավ և գտավ այս տունը:

36 Բոլոր հույսերը մարեցին: Ղազարոսը մահացավ: Ամեն ժամ նրանք շարունակում էին մտածել. «Գուցե Նա ասպարեզ գա: Գուցե Նա ասպարեզ գա: Գուցե Նա վերադառնա»: Ի վերջո նա մահացավ, շունչը լքեց նրան:

37 Նրանք գնացին, զմռսեցին նրան, հանեցին արյունը նրա միջից, կտավների մեջ փաթաթեցին, անուշահոտ նյութերով պատեցին, զմռսեցին, դրեցին գերեզմանի մեջ և մուտքի առաջ քար դրեցին, որն այն ժամանակներում իրենց թաղելու սովորույթն էր: Դա մի անցք էր հողի գուցե ժայրի մեջ, և դրա վրա քար էին դնում, դա իրենց ավանդույթն էր:

38 Առաջին օրն անցավ, երկրորդ օրն անցավ, երրորդ օրն անցավ, չորրորդ օրն անցավ, մարդն արդեն փտում էր գերեզմանում: Քիթը, հավանաբար, փոս էր ընկել: Կարծեմ առաջին բանը, որ փոս է ընկնում, քիթն է: Նա արդեն փտել էր: Նրա, նրա մարմինը արդեն հողին էր վերադարձել, այսինքն՝ վերադառնում էր: Նրա հոգին չորս օրվա չափ ճանապարհորդում էր ինչ–որ տեղ նրանից հեռու:

39 Այս կյանքում նրան կրկին տեսնելու բոլոր հույսերը մարել էին: Իսկ հետո, երբ բոլոր հույսերը մարեցին… Նրանք սպասում էին. «Միգուցե, եթե Նա գա առաջին օրը,

երկրորդ օրը»։ Ոչ։ Հետո նա մահացավ, իսկ Նա չեկավ։ Այդ ժամանակ սկսվեց հուսահատությունը։

40 Որոշ ժամանակ անց պիտի որ ինչ-որ մեկը նրան ասած լիներ. «Վարդապետը դրսում է»։ Ահա Մարթան իջնում է փողոցով։

41 Հիսուսը եկավ այդ մութ ժամին, երբ բոլոր հույսերը մարել էին։ Սովորաբար այդ ժամանակ է Նա գալիս։ Հասկանո՞ւմ եք։ Նա գալիս է հենց այդ ամենամութ պահին, այդ ժամանակ է Հիսուսը հայտնվում ասպարեզում։

42 Այժմ նայե՛ք։ Նա եկավ և կանչեց Մարթային։ Նրա ներկայությունը նոր հույսեր բերեց։ Կարևոր չէ, թե արդյոք մեռած էր տղան, մինչդեռ Նա ներկայությունը նոր հույս է բերում։

43 Գուցե դու այս երեկո նստած ես այստեղ, բարեկա՛մս, քաղցկեղով, սրտի հիվանդությունով, երբ բժիշկները հրաժարվել են քեզանից։ Գուցե շարժասայլակում ես, հաշմանդամ, ողջ գիտությունն ասել է, որ ոչ մի հույս չկա քեզ համար. կալցիումի նստվածքը ոսկորներիդ վրա գոյացումներ է առաջացրել, ինչի պատճառով էլ չես կարող դրանք ծալել։ Կամ քո, քո սիրտն այնքան վատ է, որ բժիշկն ասում է, որ ցանկացած պահի կարող ես մահանալ։ Ո՛հ, և քաղցկեղով և թոքախտով տառապող մարդկանց մեծ խմբեր, գուցե վերջին հույսը, որ դուք ունեցել եք, և ըստ երևույթին, բժիշկը մերժել է ձեզ։ Մինչդեռ Ներկայության և Հիսուս Քրիստոսի ներկայության ճանաչման մեջ գտնվելը նորից հույսեր է բերում։

44 Ինչ-որ մեկը կարող է նույնիսկ հիշեցնել քեզ դրա մասին։ Գուցե դու նախկինում երբեք չես լսել դրա մասին, բայց թող ինչ-որ մեկն ասի. «Ես գիտեմ, թե որտեղ մի եկեղեցի կա, նրանք հավատում են Աստծուն և աղոթում են հիվանդների համար», արագ (Հիմա, դուք արդեն պատրաստ եք մեռնելու։ Հասկանո՞ւմ եք), նոր հույսեր են արթնանում։ Դա միշտ այդպես է։ Այդ մութ ժամում, սովորաբար, այդ ժամանակ է, երբ ինչ-որ մեկն ինչ-որ բան է ասում դրա մասին, պատմում է ձեզ Հիսուսի մասին։ Նրա ներկայությունը նոր հույսեր է բերում։

45 Թող դա նույն բանն անի այս երեկո, ինչպես արեց անցած երեկո։ Երբ մենք տեսնում ենք այդ հաստատված Խոսքը կասկածի ստվերից այն կողմ, որը դրսևորվեց և ապացուցեց, որ *այն* Հիսուսը, որ ապրում էր տասնիննը

հարյուր տարի առաջ, որ մեռավ Գողգոթայում, երրորդ օրը հարություն առավ, և՛ հայտնվեց այդ աշակերտներին, և՛ բացեց նրանց աչքերը, և՛ տվեց տվյալ օրվա այս խստումը, այս երեկո այստեղ է մեր նեկայության մեջ, դա պետք է հույսեր արթնացնի մարդկանց մոտ: Նոր հույսեր են բռնկվում:

46 Գուցե ինչ-որ մեկն ասել է. «Եկեղեցին որոշ ժամանակ մի տեսակ չորացել էր: Մի քանի ամիս շարունակ մենք թարմ ջուր չենք ունեցել: Արթնություն չենք ունեցել: Թվում է, թե բոլորն այնքան լճացած են կամ մեկ այլ բան: Մենք պարզապես գնում ենք եկեղեցի, օրհներգ ենք երգում, և, և մի քանի քարոզ ենք լսում և տուն ենք գալիս»: Բայց հանկարծ, երբ մենք սկսում ենք չորանալ, այդ ժամանակ Հիսուսը գալիս է ասպարեզ, թարմացնում է մեզ, մի նոր բան է բերում մեզ համար: Նա միշտ այնտեղ է՝ դա անելու համար: Նոր հույսերը արթնանում են, երբ, երբ Հիսուսը ներս է մտնում: Նրա ներկայությունը նոր հույսեր է բերում:

47 Մարթան գիտեր, որ Նա էր այդ հայտնված Աստծո Խոսքը: Նա տեսավ այդ ժամանակաշրջանը: Կամ, եթե տեսած չլիներ, Օրթոդոքս կմնար, շարունակելու էր պատկանել այդ եկեղեցուն: Բայց նա տեսավ այդ խոստացված Խոսքը: Տեսավ այդ խոստացված Խոսքը դրսևորված Հիսուսի միջոցով, և նա գիտեր, որ Նա էր այդ կենդանի Խոսքը: Եվ երբ նա լսեց դրա մասին նրան չեմ մտահոգում, թե քանիսն էին նրան քննադատում, կամ էլի ինչ-որ բան, նա կառչեց Նրան իր ամբողջ ուժով: Հասկանո՞ւմ եք: Նա գիտեր, որ Հիսուսն էր այդ հայտնված Խոսքը:

48 Կասկած չկա, որ նա կարդացել էր Եղիայի օրերի պատմությունը: Եղիան այդ օրվա Աստծո հայտնված Խոսքն էր: Նա մարգարե էր, իսկ Տիրոջ Խոսքը գալիս է մարգարեին: Եվ այնտեղ մի կին կար, ով փոքրիկ երեխա ուներ, որն իրեն տրվել էր օրհնությունով, որով մարագարեն օրհնել էր նրան, և վերջինս ունեցել էր այդ երեխան:

49 Մի օր, ժամը տասնմեկի կողմերը, հավանաբար նա արևահարութուն ունեցավ: Նա արտում էր իր հոր հետ, Աստվածաշունչը չի ասում, որ դա արևահարություն էր, բայց նա սկսեց գոռալ. «Գլո՛ւխս, գլո՛ւխս», ցերեկվա ժամը տասնմեկի կողմերը: Նրա հայրը ծառա ուներ, ասաց, որ տուն տանի նրան: Նա մոտավորապես մինչև

կեսօր իր մոր ծնկներին պառկեց, վիճակը գնալով ավելի վատացավ և, ի վերջո, մեռավ։

50 Եվ հիմա հուսահատ վիճակի մեջ ընկնելու փոխարեն...բոլոր հարևանները եկան, սկսեցին լացել և ողբալ, բայց այդ հավատարիմ մայրը, նրա երեխան մեռած էր, նա տարավ նրան այն փոքրիկ սենյակը, որ պատրաստել էր մարգարեի համար, և *այդպես* պառկեցրեց նրան իր անկողնու վրա։ Եվ նա ծառային ասաց. «Ինձ համար մի էշ թամբի՛ր և քշի՛ր ուղիղ, և մի՛ դադարեցրու քշելը, մինչև քեզ չասեմ»։ Ո՛հ, Աստված իմ։ Ահա՛։

51 Մենք վիճաբանելու և բանավիճելու ժամանակ չունենք։ Այս ամենն անցյալում է։ Մենք պետք շարժվենք առաջ։ Պետք է հասնենք այնտեղ։ Մենք կարիք ունենք։

52 Եվ այսպես, նա ասաց. «Քշի՛ր ու գնա, և մի՛ դադարեցրու քշելը, մինչև քեզ չհրամայեմ»։ Եվ նրանք գնացին, մինչև հասան Եղիայի մոտ։

53 Եղիան, Աստծո մարդ լինելով, Քրիստոսի նման չէր, Քրիստոսը ամեն բան գիտեր, որովհետև Նա Աստված էր։ Եղիան Աստծո մասն էր։ Դա Քրիստոսն էր Եղիայի մեջ։ Եվ դա ժամի պատգամն էր, որովհետև այդ ժամվա համար տրված Տիրոջ Խոսքն այդ մարգարեի հետ էր։

54 Հիսուսը բոլոր այդ մարգարեների լիությունն էր, նրանցից ամեն մեկը միայն դրսևորում էր Նրան։ Ահա և վերջ։ Ողջ ընթացքում Հովսեփից՝ երեսուն կտոր արծաթից սկսած, ամենուր, նա, նա պատկերել է Քրիստոսին։ Նույնպես և Մովսեսը։

55 Դավիթը, որպես մերժված թագավոր նստած լեռան վրա լաց էր լինում, որովհետև մերժել էին նրան։ Ութ հարյուր տարի հետո Դավթի Որդին նստեց սարի վրա։ Դա Քրիստոսի Հոգին էր Դավթի մեջ այնտեղ։ Եվ Նա...Ո՛հ, Աստված իմ։ Նա և՛ Դավթի Արմատն էր, և՛ Սերունդը։ Այսպիսով Նա նստեց սարի վրա և լաց եղավ որպես մերժված Թագավոր. «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, քանի՞ անգամ ցանկացա ձեզ հավաքել, ինչպես հավն է հավաքում իր ձագերին»։ Ի՞նչ էր դա։ Դա Քրիստոսն էր այնտեղ։

56 Դա Քրիստոսն էր լաց լինում, երբ Դավիթը գրեց այս օրհներգը. «Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ ինձ լքեցիր։ Իմ բոլոր ոսկրերը. նրանք դիտում են Ինձ։ Նրանք իմ ձեռքերն ու ոտքերը ծակեցին։ Իմ հագուստները բաժանում են

իրենց մեջ ու պատմուճանիս վրա վիճակ են գցում»։ Դա Քրիստոսն էր խոսում Դավթի մեջ։ Դա ճիշտ է։ Նա Խոսքի հայտնությունն էր։ Քրիստոսը եկավ իրականացնելու այն բաները, որոնք ասվել էին մարգարեների միջոցով, որովհետև Խոսքը մարգարեների հետ էր։

57 Անցած երեկո նա ասաց դա դասի ժամանակ, որ Նա եկավ իրականացնելու այն, ինչ մարգարեներն ասել էին Իր մասին, որովհետև նրանք ունեին Խոսքը։ Իսկ Եղիան Աստծո մարգարեն էր՝ այդ օրվա Խոսքը։

58 Այսպիսով սունամուհին մնաց այդ մարգարեի հետ, մինչև որ նա եկավ և դրսևորեց Աստծո զորությունը, պառկեց երեխայի վրա և երեխան կյանքի վերադարձավ։

59 Մարթան պետք է որ իմացած լիներ սա, թեև զբաղված էր տնային գործերով՝ աման լվանալով և այլն։ Բայց այնտեղ նա ցույց տվեց իր իրական կերպարանքը։ Ցույց տվեց, թե իրականում ինչ կար նրա մեջ։ Նա իսկույն գնաց Նրան դիմավորելու։ Եթե Աստված Եղիայի մեջ էր, Նա պետք է որ լիներ Քրիստոսի մեջ, որովհետև Նա հաստատեց, որ Ինքն էր այդ Անձնավորությունը։ Ամե՛ն։ Ինձ դուր է գալիս դա, այդ վճռականությունը։ Նա գնում է Նրա մոտ։ Նա պետք է գտներ Նրան։ Եվ նա պարզում է այնտեղ, երբ հասնում է Նրա, Նրա մոտ. հիշե՛ք հիմա, գիտեր, որ Նա երբեք չի փոխել, որ Աստված երբեք չի փոխում Իր ծրագիրը։ Եթե Նա Եղիայի մեջ էր և կարողացավ մեռելին հարություն տալ, ապա Նա Քրիստոսի մեջ էլ էր և կարող էր հարություն տալ մեռելին, թեև Նա չէր արել դա, որովհետև դա նույն Աստված է։

60 Նա դեռևս չի փոխվել։ Նա նույնքան Աստված է այս երեկո, ինչպես երբևէ եղել է։ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան։ Նա չի փոխվում։

61 Եվ Նա գիտեր, որ նա գիտեր, որ դա Նրա մեջ էր։ Տեսե՛ք, ընդամենը մի քանի րոպեում դա ապացուցեց իրեն, երբ նա ինչ-որ բան ասաց Նրան իր եղբոր մասին, և ասաց. «Տե՛ր, ես, ես հավատում եմ, որ դա Դու ես»։

62 Եվ Նա ասաց. «Ես եմ Հարությունը և Կյանքը։ Եթե մեռնի էլ, կապրի։ Եվ ով կենդանի է ու հավատում է Ինձ, հավիտյան չի մեռնի։ ԵՍ ԵՄ»։ Դա այն ԵՍ ԵՄ-ն էր վառվող մորենու մեջ Մովսեսի հետ։ «Ես եմ Հարությունը։ Ես եմ Կյանքը։ Ես էի այդ Պատը։ Ես դեռևս Նա եմ։ Ես եմ Հարությունը և Կյանքը։ Ինձ հավատացողը, եթե մեռնի էլ, կապրի։ Ով կենդանի է ու հավատում է Ինձ, հավիտյան

չի մեռնի»։ Այս մեծ հավաստիացումից հետո, որ վերջինս ստացավ, որ Նա էր խոստացված Խոսքը, երբ Նա ասաց, լինելով Մարգարե, Նա չէր կարող ստել։ Դրա համար Նա, երբ Նա ասաց. «Ես ԵՍ ԵՄ։ Ես եմ Հարությունը և Կյանքը»։

63 Նա ասաց. «Ես հավատում եմ, որ Դու Աստծո Որդին ես, որ պետք է աշխարհ գայիր։ Թեև եղբայրս մահացած է, պառկած է գերեզմանում, նա...նրա մարմինը հիմա քայքայվում է, բայց նույնիսկ հիմա, ինչ էլ որ ասես, այն կիրականանա»։ Ճի՛շտ է։

64 Այն ամենը, ինչ նա ուզում էր, սա էր՝ լսել, որ Նա ասում է դա։ Ամեն։ Ո՛հ Մարթա, որտե՞ղ ենք մենք այս երեկո։ «Միայն մի Խոսք ասա, և իմ ծառան կապրի»։ Միայն լսել, որ Նա ասում է դա։ Նրանք կարող էին գալ և ասել նրան, որ Նա ասել է դա, բայց ահա Նա Ինքն էր այնտեղ։ Ո՛վ Աստված, բա՛ց արա կուրացած աչքերը, որ կարողանան տեսնել։ Երբ Նա Նրա ներկայության մեջ ասում է Խոսքը, միշտ դրսևորվում է։

65 Մարթան ասաց. «Դու Ինչ էլ Աստծուց խնդրես, Աստված Քեզ կտա։ Թո՛ւյլ տուր ինձ միայն լսել»։ Նա ուզում էր, որ Ինքն ասի Խոսքը։ Դա էր այն ամենը, ինչ նա ուզում էր լսել։ Լսել միայն Խոսքը, դա էր այն ամենը, ինչի կարիքը նա ուներ՝ լսել, որ Նա ասում է, որ կանի դա։

66 Հենց այդ ժամանակ էլ Նա կաներ դա, բայց հասկանում եք, տեսիլքի համաձայն, որ Հայրը ցույց էր տվել Նրան, Նա պետք է կանգներ գերեզմանի մոտ։ Ո՛հ, Աստված իմ։ Կառչե՛ք հավատքից։ Աստված ամեն բանում ճիշտ է գործում։ Ամեն ինչ լավ կլինի։ Միայն սպասե՛ք, մինչ նա կհասնի գերեզմանի մոտ։

67 Ուշադրություն դարձրեք, Մարթան կարող էր այնպես անել, որ Նա ասեր դա, նույնիսկ երբ Նա դեռ...Բոլոր հույսերը մարել էին, ամեն բան։ Ղազարոսը մեռած էր, փտում էր գերեզմանում, բայց միայն լսել, որ Նա ասում է դա, սա էր այն ամենը, ինչ ինքն ուզում էր։

68 Երբ Նա ասաց. «Ես եմ Հարությունը և Կյանքը», նա հավատում էր դրան։ Նա հավատում էր դրան։ Այժմ ուշադրություն դարձրեք, հիմա նա պետք է հավատար անհնարինին, երբ լսեց, թե ինչպես Նա ասաց. «Ես եմ Հարությունը և Կյանքը։ Եթե մեռնի էլ, կապրի, և ով կենդանի է ու հավատում է Ինձ, հավիտյան չի մեռնի»։ — Հավատո՞ւմ ես սրան։

69 Նա ասաց. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ: Ես հավատում եմ, որ Դու ես Աստծո Որդին, որ պետք է աշխարհ գայիր»: Ինձ դուր է գալիս դա: Ինձ դա դուր է գալիս:

70 Ես, ես առաջ էլ սա ասել եմ: Կարելի է նորից պատմել: Ոչ շատ վաղուց զրուցում էի մի կնոջ հետ, դա մի եկեղեցի էր, որի մասին վերջերս հիշեցրի, որը չի հավատում, որ Նա Աստված էր, Նրա Աստվածությունը. Նա ընդամենը մարգարե էր, սովորական մի մարդ:

71 Նա, հիրավի, դա էր: Նա դա էր գումարած Աստված: Հասկանում եք, Նա հայտնություն էր: Հիսուսը մարմին է, Տղա, Մարդ. Աստված էր, որ բնակվում էր Նրա մեջ: Աստված Նրա մեջ էր: Նա Աստված–մարդ էր: Նա Մարդ էր, մինչդեռ Աստված էր դրսևորված մարմնի մեջ: Երբ մենք տեսնում ենք Հիսուսին, Աստծուն ենք տեսնում: Ահա թե ինչ ասաց Նա. «Հորը տեսնողը…Ինձ տեսավ, Հորը տեսավ»: Որովհետև Նա արտացոլանքն էր, որովհետև Նա Խոսքն էր, ամեն, որը սկզբում էր: Ամեն:

72 Նա մարգարեներին «աստված» կոչեց: Գիտեի՞ք դա: Նա ասաց. «Դուք «աստված» եք կոչում նրանց, ում մոտ գալիս էր Աստծո Խոսքը, ուրեմն ինչպե՞ս կարող եք Ինձ դատապարտել, երբ ասում եմ՝ Ես Աստծո Որդին եմ»:

73 Որովհետև նույն Խոսքն ասել էր, որ Նա այնտեղ է լինելու, և ահա Խոսքը կրկին դրսևորվեց: Եվ այնուհանդերձ նրանք չեն հավատա դրան:

74 Այս կինն ինձ ասաց. «Ես կարող եմ ապացուցել ձեզ»: Ասաց. «Ինձ դուր է գալիս լսել ձեր քարոզները, բայց այնտեղ մի բան կա, որը դուք չափազանց հաճախ եք անում»:

— Եվ այդ ի՞նչ է:

— Դուք չափազանց հաճախ եք պարծենում Հիսուսով:

75 Ասացի. — Հուսով եմ, դա է այն ամենը, ինչ Նա կունենա իմ դեմ, երբ գա: Եվ նա ասաց…Ես ասացի. «Հուսով եմ, դա է այն ամենը, ինչ Նա կարող է, թերությունը, որ Նա կարող է իմ մեջ գտնել»: Ասացի. «Եթե ես տաս հազար լեզուներ ունենայի, բավական չէր լինի ասել, ո՛հ, Աստված իմ, թե ի՞նչ է Նա»:

— Բայց, դուք, դուք Նրան աստվածացնում եք:

76 — Նա Աստված էր։ Կամ, եթե Նա Աստված չլիներ, ուրեմն Նա ամենամեծ սուտասանն էր, որն աշխարհին երբևէ ունեցել է։

— Նա մարգարե էր։

77 — Նա Մարգարե էր, դա ճշմարիտ է. Աստված–մարգարե, Խոսքի լեցունությունը։ Մարգարեի մոտ ընդամենը Խոսքն էր գալիս, դա էր նրան դարձնում, նրան դարձնում մարգարե։ Բայց Նա Խոսքի լեցունությունն էր։

78 — Ես կարող եմ ապացուցել ձեզ,— ասաց նա,— դուք Նրան աստվածացնում եք։

— Նա աստվածային էր։

— Նա չի կարող աստվածային լինել։

Ասացի. «Նա…Բայց Նա սստվածային էր»։

Նա ասաց. «Դուք ասացիք, որ հավատում եք Աստվածաշնչին»։

Ասացի. «Այո»։

79 Նա ասաց. «Ես կապացուցեմ ձեզ ձեր իսկ Աստվածաշնչով, որ Նա աստվածային չէր»։

80 Ասացի. «Արե՛ք այդ։ Եթե Աստվածաշունչն է այդպես ասում, այդ դեպքում ես կհավատամ դրան, որովհետև հավատում եմ, որ Խոսքը ճշմարիտ է»։

81 — Ճանապարհին, մինչև Ղազարոսի գերեզմանը, հիշո՞ւմ եք դա Հովհաննու Ավետարանի 11–գլխում։

— Իհարկե, հիշում եմ, տիկին։

82 — Դե, հիմա, ճանապարհին Նա լաց եղավ։ Աստվածաշունչն ասում է՝ Նա արտասվեց։

— Անշուշտ, Աստվածաշունչն ասում է, որ Նա արտասվեց։

— Ինչպե՞ս կարող էր Նա աստվածային լինել և արտասվել։

— Նա մարդ էր։

— Մա՞րդ և ասվածայի՞ն։

83 Ասացի. «Այո՛, տիկին։ Դուք չեք կարողանում դա տեսնել։ Նա մարդ էր, երբ գնում էր այնտեղ, լացելով լացողների հետ, ճիշտ է, վշտանալով վշտացողների հետ։ Նա մարդ էր։ Բայց երբ Նա ուղղեց Իր թույլ մարմինը և ասաց՝ «Ղազարո՛ս, դո՛ւրս արի», և չորս օրվա մահացածը

ոտքի կանգնեց։ Դա ավելին էր պահանջում, քան մարդ, դա Աստված էր Մարդու մեջ»։ Ո՞վ կարող է, Աստծուց բացի, հարություն տալ մեռելին։ Նա է Հարությունը և Կյանքը։ Դա ճիշտ է։

84 Այդ երեկո ծովի վրա, երբ Նա այնտեղ էր, հոգնած, նավակի հետևի կողմը պառկած էր, որտեղ տաս հազար դևեր երդվել էին, որ այդ երեկո խորտակելու են Նրան, և այդ հին նավակը 22ի փականի նման տարուբերվում էր ալեկոծված ծովի վրա։ Այդ դևերը մտածում էին. «Ա՛յ հիմա Նա մերն է։ Նա քնած է, մենք բոլորին կխորտակենք»։ Ո՛հ, Նա մարդ էր, հոգնած, բայց երբ վեր կացավ, ոտքը դրեց նավակի պարանի վրա, և աչքերը վեր բարձրացրեց ու ասաց. «Խաղաղվի՛ր, հանդարտվի՛ր», և քամիներն ու ալիքները հնազանդվեցին Նրան։ Դա ավելին էր, քան մարդը։

85 Նա մարդ էր, երբ քաղցած էր, սարից էր իջնում, մի կտոր հաց կամ ուտելու բան փնտրելով, կամ թուզ ծառից։ Բայց երբ հինգ հացաբլիթն ու երկու ձուկն առավ և հինգ հազար հոգու կերակրեց, դա Աստված էր այդ Մարդու մեջ։ Դա ճիշտ է։

86 Ո՛հ, ամեն մարդ, ով երբևէ իրեն աննշան է համարել, հավատացել է դրան, բոլոր բանաստեղծները, ովքեր հավատացել են դրան։ Զարմանալի չէ, որ նրանցից մեկը գրել է.

Ապրելով ինձ սիրեց, մեռնելով ինձ փրկեց,
Թաղվելով իմ մեղքերը տարավ շատ հեռու,
Հարություն առնելով ձրի արդարացրեց ընդմիշտ,
Մի օր Նա պիտի գա, ո՜հ, փառավոր օր։

87 Էդդի Պերոնետը, ում երգերը չէին վաճառվում։ Մի օր երերալով Սուրբ Հոգու ազդեցության ներքո, գրիչը վերցրեց և օրհներգի երգը գրեց, երբ նա գրեց.

Բոլորը հոչակեն Հիսուսի Անվան զորությունը,
Թող հրեշտակներն երեսնիվայր ընկնեն,
Թագավորական թագը բերե՛ք,
Նրան ամենքի Տեր թագադրե՛ք։ (Ալեո՜ւիա)։

88 Անշուշտ, մենք հավատում ենք, ահա թե ով էր Նա։ Այո՛, պարո՛ն։

89 Հիմա Մարթան պետք է հավատար անհնարինին, ըստ այդ օրվա ժամանակակից մտածելակերպի: Մենք էլ պետք է նույնը անենք՝ նոր Կյանք, կատարվող ինչ-որ բան տեսնելու համար: Բայց եթե Նա ճանաչեց…Մարթան ճանաչեց, որ Նա էր Խոսքը, այն ժամանակ անհնարինը կարող է տեղի ունենալ, որովհետև Նա Արարիչ է, և կանգնելու է Իր ամեն ասացի հետևում:

90 «Ամեն բան հնարավոր է հավատացողին»: Դա Նրա Խոսքն է: Բայց անհնարին բաները դրսևորվում են, երբ հավատում են Նրա Խոսքին: Այո՛, պարո՛ն: Երբ հավատում են Աստծո ասածին, անհնարին բաները հայտնվում են: Երբ Աստված ասում է, որ դա կլինի, այնժամ դու վեցնում ես այդ Խոսքը, և հետևում ես դրան, անհնարին բաներ են կատարվում: Անկասկած կատարվելու է:

91 Սակայն ուշադրություն դարձրեք, չնայած այդ ամենին, նա ասաց. «Նույնիսկ հիմա, Տե՛ր, ինչ որ Դու Աստծուց խնդրես, Աստված դա կանի»: Նա գիտեր, որ իրեն միայն պետք էր, որ այդ Խոսքը գար Նրանից: Դա էր այն ամենը, ինչ նա պետք է աներ, այն էր՝ ստանալ այդ Խոսքը: Այո՛, դա նրա ամենամութ ժամն էր, և Հիսուսը եկավ և կանչեց: Ո՛հ, ինչպիսի՜ բան տեսան նրանք, հարություն:

Եկե՛ք ևս մի քանի պահեր դիտարկենք, երբ մութ ժամերը եկան:

92 Մի անգամ Հոբ անունով մի մարդ է լինում, Աստվածաշնչի ամենահին մարգարեներից մեկը: Նա մեծ մարդ էր: Նա, նա սիրում էր Տիրոջը և անում էր այն ամենը, ինչ ինքը գիտեր, թե ինչպես պիտի անի: Իսկ Սատանան ցանկացավ մաղով անցկացնել նրան, դրա համար մի օր նա Աստծուն ասաց…Այո, ավելի ճիշտ՝ Աստված ասաց նրան. «Որտե՞ղ էիր, սատանա՛»:

93 — Ո՛հ, Երկրի վրա շրջագայելուց ու այստեղ-այնտեղ ման գալուց էի,— ասաց նա:

94 —Ուշադրություն դարձրի՞ր Իմ ծառա Հոբին: Նրա նմանը չկա Երկրի վրա: Նա կատարյալ մարդ է:

95 — Ո՛հ,— ասաց նա,— դե իհա՛րկե, Դու ամեն բան տալիս ես նրան, ամեն ինչ անում ես նրա համար: Իհա՛րկե, նա մեծ մարդ է: Բայց մի անգամ հանձնիր նրան իմ ձեռքերին և ես կփոխեմ եղանակը: Ես կստիպեմ նրան ուղիղ երեսիդ անիծել Քեզ:

96 Նա ասաց. «Դա քեզ չի հաջողվի»։ Այդպիսին է Նրա վստահությունը հավատացյալի հանդեպ։ Ինչո՞ւ։ Նա անսահման է։ Նա հավիտենական է։ Նա վերջը գիտի սկզբից առաջ։ Նա գիտեր, որ Սատանան չէր կարող դա անել։ Որովհետև Նա Խոսքն է, Նա գիտեր, թե Հոբն ինչ է անելու։

97 Հիմա, հիշե՛ք, Հոբը, նա ծածկեց նրան պալարներով, սպանեց նրա զավակներին, խլեց իր ողջ ունեցվածքը։ Նրա առողջությունը քայքայված էր։ Նույնիսկ նրա մխիթարիչները եկան և չկարողացան ոչինչ անել նրան գաղտնի մեղավոր լինելու մեջ մեղադրելուց բացի։ Եվ ծեր Հոբը հասավ այնպիսի կետի, որ ընկավ վշտի մեջ։

98 Դուք պետք է նախ ընկնեք վշտի մեջ։ Պետք է հասնեք այն պահի, երբ գտնվում եք ճանապահի վերջում։

99 Հոբը հասավ ճանապարհի վերջին, երբ ասաց. «Թող կորչի այն օրը, երբ ես ծնվեցի։ Թող լույս չծագի նրա վրա, և խավար լինի այդ օրը, թող անունը երբեք չտան»։ Եվ այդ վշտի մեջ, այն ժամանակ Հիսուսը եկավ։ Նա նայեց ցած և ասաց. «Ես տեսնում եմ, թե ինչպես է մարդը, ծաղիկը մահանում և գարնանը նորից վերապրում։ Եթե ծառը կտրվում է, ջրի բույրից այն նորից է ծլում»։ Նա տեսել էր, որ ողջ բուսական կյանքը նորից կենդանանում է, բայց ասաց. «Մարդը պառկում է, ավանդում է իր հոգին, և ո՞ւր է նա»։ Նա գիտեր, որ ինքը ծեր էր։ Նա ասաց. «Նրա որդիները գալիս են նրա վրա սգալու, բայց նա չի նկատում։ Ո՛հ, երանի՜ թե մինչ Քո բարկությունն անցնելը գերեզմանում թաքցնեիր ու պահեիր ինձ, ինձ համար մի ժամանակ որոշեիր ու հետո ինձ մտաբերեիր։ Մենք գնում էինք...»։ Եվ այդպես զրուցելով շարունակվում է։ Նա իր վշտի վերջում էր. «Ի՞նչ է կատարվելու»։ Տերևները կենդանանում են, վերադառնում են ծառերի վրա, ծաղիկները նորից վերադառնում են, ցանկացած այլ բան աճում է, բայց մարդը պառկում է և ավանդում է իր հոգին»։ Նա վշտի մեջ էր։ Չգիտեր, թե ինչ կարող է տեղի ունենալ նրա հետ, իսկ նա տարիքով էր։

100 Երբ նա մտածում էր, այն ժամանակ Հիսուսը եկավ։ Աստված ուղղեց նրա գլուխը դեպի երկինք, և նա տեսավ Հիսուսի գալուստը այս վերջին օրերում։

101 Այդ ամենամութ ժամին, երբ նրա կինն ասաց. «Անիծի՛ր Աստծուն և մեռի՛ր», նա ասաց. *«Ո՛վ կին, հիմար կանանց մեկի խոսածի պես ես խոսում։ Տերը տվեց ու Տերը վերցրեց, թող օրհնյալ լինի Տիրոջ Անունը»։* Նույնիսկ

նրա կինը երես էր թեքել նրանից: Նրա եկեղեցին երես էր թեքել նրանից: Բոլորը երես էին թեքել նրանից:

102 Այդ մութ ժամին, երբ նա չգիտեր, թե այնտեղից ուր է գնալու, Հիսուսը եկավ: Այդ ժամանակ նա աղաղակեց. «Ես գիտեմ, որ Փրկիչս կենդանի է, և Նա վերջին օրը կանգնելու է երկրի վրա. ու թեկուզ մաշկիցս հետո որդերը կործանեն այս մարմինը, դարձյալ իմ մարմնում տեսնելու եմ Աստծուն, Ում ես ինքս եմ տեսնելու»: Նրա ամենամութ ժամին, այնժամ Հիսուսը եկավ: Այո՛, պարո՛ն:

103 Մովսես: Մովսեսի համար ամենամութ ժամը եկավ Իսրայելում: Նա իր պարտականությունը կատարելու մեջ էր. հանդիպեց Աստծուն այնտեղ՝ մորենու մեջ և ասաց. «ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ»: Նա իջավ և պայքարեց Հանեսի և Համրեսի բոլոր տեսակի նմանակումների հետ, ովքեր փորձում էին նմանակել իր գործը: Այս ամենում նա հավատարիմ մնաց Աստծուն: Ի վերջո նա մղեց Իսրայելին հավատալու: Եվ ահա նա դուրս է գալիս Եգիպտոսից, ճանապարհ ընկնելով դեպի ավետյաց երկիր, որտեղ Աստված ասել էր. «Այս լեռան վրա կերկրպագեք Ինձ»: Դա Աստծո Խոսքն էր: Մովսեսը գիտեր, որ պետք է գնար այդ սարի մոտ: Ամեն: Աստված էր այդպես ասել: Ոչ մի Փարավոն չէր կարող սպանել նրան: Ոչ մի դև չէր կարող սպանել նրան: Ոչինչ չէր կարող սպանել նրան: Նա գալիս է այդ սարի մոտ: Ամե՛ն: Ալելո՛ւիա: Ես ինձ կրոնավոր եմ զգում: Նա գնում է այդ սարի մոտ:

104 Այդպես էլ մենք ենք Փառքի ճանապարհին: Ոչինչ չի կարող մեզ կանգնեցնել: Ո՛չ, պարո՛ն: Աստված հաստատելու է Իր Խոսքը: Ինձ չի հետաքրքրում, թե ինչ է կատարվում, Նա միևնույնն է կանի դա: Այո՛:

105 Ճանապարհին, անմիջապես պարտականությունը կատարելու ժամանակ: Ահա նա սեղմված է լեռների արանքում: Նա իր ետևում աղմուկ է լսում: Ի՞նչ է սա: Փարավոնի հազարավոր կառքերն էին գալիս, զենք ու զրահով, նիզակներով և նման բաներով, որ հասնեն և կոխկրտեն նրանց: Առջևում Կարմիր ծովն էր, որը փակում էր իր ճանապարհը: Ի՞նչ արեց նա: Նա հայտնվեց աղ...Նա աղետալի վիճակում էր: Ժողովուրդն աղաղակ բարձրացրեց. «Ո՛հ, մենք հիմա ծուղակի մեջ ենք: Փարավոնը կսպանի մեզ, կկոտորի բոլորիս: Մեր երեխաները կմեռնեն այստեղ՝ անապատում»:

Մովսեսն աղաղակեց. «Ո՛հ Աստված»:

106 Այն ժամանակ Հիսուսը եկավ ասպարեզ: Նա Հրե Սյուն էր: Դա ճիշտ է: Նա իջավ և կախվեց նրա և վտանգի միջև: Ամե՛ն: Նա մեր Միջնորդն է: Նա կանգնում է մեջտեղում, ամե՛ն, Միջնո՛րդ: Ահա Նա կանգնած էր, կանգնած էր այնտեղ. խավար եղավ Եգիպտացիներն՝ նրանց, ովքեր գալիս էին, որ փորձեն ինչ-որ բան անեն դրա հետ կապված: Բայց Նա Լույս էր տալիս նրանց, որի շնորհիվ առաջ էին շարժվում: Հետո առավոտյան, երբ քամին սկսեց ուժգին փչել, այդ ժամանակ ի՞նչ արեց Նա: Իջավ Կրակե Սյան տեսքով:

107 Հիշե՛ք, Նա դեռևս այդ Կրակե Սյունն է: Այո՛, պարո՛ն: Երբ Նա երկրի վրա էր՝ ասաց. «Ես եկել եմ Աստծուց և Աստծո մոտ եմ գնում»:

108 Իր մահից, թաղումից, հարությունից և համբարձումից հետո Պողոս Առաքյալը Դամասկոսի ճանապարհին հարվածվեց այդ նույն Կրակե Սյանով: Հիշե՛ք, նա եբրայեցի էր: Նա չէր ասի սա...Նա ասաց. «Ո՞վ ես Դու, Տե՛ր»: Մեծատառ Տ-ե-ր, Էլոհիմ: «Ո՞վ ես Դու, ում ես հալածում եմ»:

Տերը պատասխանեց. «Ես Հիսուսն եմ»:

109 Ամե՛ն: Ալելո՛ւիա: Նա է Առաջինն ու Վերջինը: Նա դեռևս նույնն է: «Մի քիչ ժամանակ էլ, և աշխարհն Ինձ չի տեսնի, բայց դուք Ինձ կտեսնեք, որովհետև ձեզ հետ և ձեր մեջ կլինեմ»: Նույն Կրակե Սյունը, նույն Աստված նույն բանն անելով, նույն խոստումներով, ամեն, դրսևորում է Իր Խոսքը: «Ես եմ Հարությունը և Կյանքը: Ես եմ Նա, որ Էր, որ Է և որ պիտի գա»: Այո՛, պարո՛ն: Այո:

«Մեր հայրերը անապատում մանանա կերան»:

110 Նա ասաց. «Եվ նրանք բոլորը մեռան: Բայց ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ»: Մովսեսը...այրվող մորենու մեջ, որ ԵՍ ԵՄ-ն էր: Նա դեռ ԵՍ ԵՄ-ն է, ոչ թե Ես էի, այլ ԵՍ ԵՄ, ներկա ժամանակով, միշտ:

111 Մենք այստեղ տեսնում ենք, որ Մովսեսը հայտնվեց անելանելի դրության մեջ, և Քրիստոսը իջավ: Հիմա, Աստվածաշունչն ասում է դա, որ՝ «Մովսեսը Քրիստոսի նախատինքն ավելի մեծ հարստություն համարեց, քան Եգիպտոսի գանձերը»: Քրիստոսի՛ նախատինքը: Քրիստոսը Օծությունն էր, Լոգոսը, որ դուրս էր եկել Աստծուց: Հրեշտակը, ցանկացած Աստվածաշունչ ընթերցողը գիտի, որ այդ Հրեշտակը Քրիստոսն էր: Եվ

Նա այնտեղ՝ անապատում էր, և ասպարեզ եկավ այն տեսքով, որով Նա պետք է հայտնվեր։ Փա՜ռք Աստծուն։

112 Այսօր Նա գալիս է կերպարանքով, նույն Քրիստոսը, որ դրսևորվեց։

113 Նա ասել էր, որ հանելու է նրանց։ Նա անում էր դա։ Ահա Նա եկել էր կանգնելու Իր Խոսքի հետևում՝ հաստատելու համար Այն։ Այն բանից հետո, երբ Նա եկավ, ինչպես որ եկավ Մարթայի մոտ, այնժամ Նա կանչեց։ Նա ասաց. «Մովսե՛ս, ինչո՞ւ ես Ինձ աղաղակում։ Ասա՛ այս ժողովրդին, որ առաջ շարժվի»։ Այդ մութ ժամին Կարմիր ծովը բացվեց և նրանք անցան, ճանապարհ ընկան՝ Աստծո Խոսքը իրագործելու համար։ Այո՛, Մովսեսի ամենամութ ժամին, այնժամ Հիսուսը եկավ։ Մենք հիմա ժամանակ ունենք…Եվ Նա կանչեց Մովսեսին։

114 Մենք ուզում ենք ձեր ուշադրությունը հրավիրել մեկ այլ մարդու վրա, ում անունը Հայրոս էր։ Այսօր էլ աշխարհում նրանցից այնքան շատ կան։ Նա գաղտնի հավատացյալ էր։ Նա սիրում էր Հիսուսին։ Նա լսել էր Նրա մասին։ Նա հավատում էր Նրան։ Բայց հասկանում եք, նա արդեն միացել էր կազմակերպությանը։ Այո։ Նա, նա, նա, նա ուղղակի…Նա չէր կարող դուրս գալ և խոստովանել դա։ Նա հավատում էր դրան, բայց չէր կարող խոստովանել դա, որովհետև արդեն միացել էր անհավատների հետ։ Բայց նա իրոք հավատում էր դրան։

115 Դուք գիտեք, երբ մարդը հայտնվում է այդ վիճակում, Աստված երբեմն նրան բերում է առճակատման։ Վշտի մեջ է, որ մենք ցույց ենք տալիս մեր իրական կերպարանքը, թե ով ենք մենք իրականում։

116 Եվ այսպես նա այնտեղ էր, ինքն արդեն միացել էր անհավատներին, և նա գնացել և արդեն գրանցել էր իր անունը գրքում և այլն։ Նա քահանա էր, դրա համար նա, նա, նա պարզապես չէր կարող խոստովանել դա, որովհետև դա նրա կերակրի կտրոն էր։ Բայց նա շարունակում էր հավատալ Հիսուսին։

117 Մի օր նրա փոքրիկ աղջիկը հիվանդանում է։ Ո՛հ, Աստված իմ։ Նա, անկասկած այն մարդկանցից էր, որ եթե նա…այդպես, բժիշկ կկանչեր։ Բժիշկը գալիս և լսում է երեխային։ Նրա ջերմությունը գնալով ավելի ու ավելի է բարձրանում։ Որոշ ժամանակ անց այնպես է ջերմում և այլն, որ ի վերջո հասնում է մահամերձ վիճակի։ Նա վշտի մեջ էր։ Նա պետք է ինչ–որ բան աներ։ Նա, նա

պարզապես չգիտեր ինչ անել: Նա մտածեց. «Եթե միայն կարողանայի գտնել Նրան, որտեղ էլ որ լիներ»: Նա Նիկոդեմոսի նման չսպասեց մինչև գիշերն ընկնի, որ անձնական զրույց ունենա: Գործելու ժամանակն էր, եկել էր գործելու ժամանաը, և այդ ժամանակ նա պետք է գործեր:

118 Եվ ես կարծում եմ, եղբա՛յր և քո՛ույր, որ նույնն էլ հիմա է: Եկել է գործելու ժամանակը: Եկել է հավատալու կամ չհավատալու ժամանակը: Այդ բաժանող գիծը գալիս է յուրաքանչյուր տղամարդու և կնոջ մոտ: Դա գալիս է յուրաքանչյուր երեխայի մոտ: Երբեմն, երբ դու անցնում ես այդ գիծը, միայն մեկ բան է մնում. դատաստան, երբ անցնում ես ողորմության և դատաստանի միջև եղած սահմանը, երբ անցնում ես այդ գիծը:

119 Հիշե՛ք, նա վշտի մեջ էր: Չգիտեր ինչ աներ: Քահանաները կանգնած էին այնտեղ, բոլոր ռաբբիները կանգնած էին նրա շուրջը: Համայնքը նրա հետ էր, բոլորն այնտեղ էին, նայում էին, թե ինչպես էր նրա փոքրիկ աղջիկը մահանում: Բժիշկը ձեռքերը ծալած կանգնած էր դրսում, ուսերն էր թոթվում. «Ես իմ իմացած բոլոր դեղերը տվեցի նրան, և դեռ...»:

120 Հասկանում եք, դա Հիսուսն էր գործում այդ ամբողջ ժամանակ: Նա անում էր սա որոշակի նպատակով՝ այդ մարդու իսկական կերպարանքը ցույց տալու համար: Որոշ ժամանակ անց, պատկերացնում եմ, թե ինչպես է նա գնում վերցնում իր սև գլխարկը և վրան քաշում ու հագնում իր քահանայական հագուստը:

«Ո՞ւր ես գնում»:

121 «Ես...Ես լսել եմ, որ Նա գետի մոտ է: Գնում եմ Նրա հետևից»: Ո՛հ, Աստված իմ: Նա գնա՛ց:

122 Այդ օրհասական ժամին նա պետք է որոշում կայացներ. թողներ, որ իր երեխան մեռնի, թե նա գիտեր, որ դա Խոսքի հայտնությունն էր: Նա քահանա էր, և կարդացել էր Խոսքը, ու գիտեր, որ դա Աստծո դրսևորումն էր: Աստված Քրիստոսի մեջ էր՝ աշխարհը հաշտեցնելով Իր հետ: Նա գիտեր դա, և ստիպված էր որոշում կայացնել: Նա պետք է սխալ գործեր՝ թողներ որ իր երեխան մեռնի, կամ աներ իր խոստովանությունը: Երբ նա ընկավ այդ վշտի մեջ, հենց այն ժամանակ էր, որ Հիսուսը եկավ: Նա գնաց Նրա հետ հանդիպելու: Հիսուսն ասաց, ասաց. «Ես կգնամ քեզ հետ, ինչ

էլ որ դու ասես»։ Եվ ճանապարհին ահա գալիս է պատգամաբերը, և հայտնում է տխուր լուրը։ Նա արել էր իր խոստովանությունը, որ հավատում էր Նրան։ Այդ ժամանակ նա առանձնացել էր եկեղեցուց և իրեն դրսևորել էր հանրության առաջ, որ հավատում է Հիսուսին։

123 Եվ ահա մի պատգամաբեր գալիս և ասում է. «Մի՛ անհանգստացրու ոչ մեկին, որովհետև աղջիկդ արդեն մահացել է։ Երեկ է նա մահացել։ Նա արդեն մահացել է։ Էլ մի խափվիր դրանով»։

124 Եվ, ո՜հ, քիչ էր մնում նրա սիրտը կանգներ։ Բայց նա նայեց և տեսավ Հիսուսի այդ աչքերը, ասաց. «Մի՞թե քեզ չասացի։ Մի՛ վախեցիր, եթե ուզում ես Աստծո փառքը տեսնել։ Ինչի՞ց վախեցար։ Ես արդեն ասել եմ, որ կգնամ»։

125 Նա արդեն ասել է, որ կգա։ Նա արդեն ասել է, որ կանի սա, և ահա Նա անում է։ Ամեն։ Նա ասել է, որ վերջին օրերում կբարձրանա ասպարեզ և կանի այս բաները, որոնք արեց, ինչպես անցած երեկո կարդացինք և խոսեցինք։ Ահա Նա անում է այդ։ Ինչի՞ց եք վախենում։

126 Հիշե՛ք, երբ Նա եկավ, կանչեց նրան մեռելներից։ Նա եկավ ասպարեզ և կանչեց նրան մեռելներից։

Ծեր կույր Բարտիմեոսին մի անգամ հասավ նրա ամենամութ ժամին։

127 Հիսուսն այնտեղ՝ ներքևում էր, Ամբողջական Ավետարանի Ձեռներեցների նախաճաշ էր կազմակերպվել Երիքովում, և Զաքեոսն այնտեղ՝ Նրա մոտ էր։ Հանդիպել էր նրան ծառի վրա՝ փողոցի ներքևում։ Այսպիսով, երբ Նա...Նա այլ բան չէր կազմակերպի, վստահ եմ։ Հասկանո՞ւմ եք։ Այսպիսով, հետո երբ Նա եկավ այնտեղ, և Նա, Նա ուներ նրան, Զաքեոսը գնաց Նրա հետ։

128 Ծեր կույր Բարտիմեոսը մանկուց կույր էր եղել։ Նա մտածում էր, որ Հիսուսը կարող էր դուրս գալ այդ դարպասներից, և ինքը սպասում էր։ Որոշ ժամանակ անց նա աղմուկ լսեց, և բոլորը կողքով անցնում էին։

129 Եվ նա լսեց, թե քահանան ինչպես է ասում. «Հէ՜յ, հէ՜յ, դո՛ւ, դո՛ւ, բարձրանում ես սարի վրա։ Թե՞, թե՞, թե՞... Մենք լսել ենք, որ Դու հարություն ես տալիս մեռելներին։ Մենք այստեղ նրանցով լի գերեզմանոց ունենք։ Եթե Դու Մեսիան ես, եթե Դու Մեսիան ես, արի՛ այստեղ և հարություն տուր նրանց»։

130 Դուք գիտեք, որ այդ նույն դևը դեռ կենդանի է, հասկանում եք, կրոնի տեսքով, նույն ձևով: Հասկանո՞ւմ եք:

131 «Եթե Դու Մեսիան ես, մենք…մեռելներին հարություն ես տալիս, մենք այստեղ նրանցով լեցուն գերեզմանոց ունենք: Արի՛»: Եվ, ո՛հ, բոլորն աղաղակում էին: Մեկը բացականչում էր. «Օվսա՜ննա Մարգարեին»: Մյուսը *այս, այդ* կամ *այլ բան էր* բացականչում: Այնպիսի՜ խառնաշփոթ էր:

132 Այս տարեց կույրը մտածում էր. «Ո՛հ, ես բաց թողեցի Նրան: Նա դուրս եկավ այնտեղ, իսկ ես կարծում էի, որ Նա այստեղ կգա: Ինձ սխալ տեղ էին դրել»: Եվ նա սկսեց աղաղակել: Նա մտածեց. «Եթե Նա Խոսքն է, Նա Աստված է, Նա պետք է լինի»: Ուստի. «Ո՛վ Հիսուս, Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ»: Այդ վշտի ժամին, նա աղաղակեց:

133 Հիմա Հիսուսը, եթե նշեք այստեղ, Երիքովում էր: Ասում են, որ այնտեղը, որտեղ նա նստած էր հարյուր հիսուն յարդ հեռու էր այդտեղից, որտեղ Հիսուսն էր: Հազարավոր մարդկանցով շրջապատված, Նա չէր կարող լսեր այդ մարդու աղաղակը: Ո՛չ: Բայց Նա զգաց դա: Նա կանգ առավ:

134 Ես մի երեկո ուզում եմ քարոզել այս թեմայով՝ «Եվ այն ժամանակ Հիսուսը կանգ առավ»: Ո՛հ «Եվ այն ժամանակ Հիսուսը կանգ առավ»: Ո՛հ:

135 Բայց երբ Հիսուսը կանգ առավ, ի՞նչ էր դա: Նա կանչեց նրան: «Վարդապետն է եկել: Քաջալերվի՛ր,— ասացին աշակերտները,— Նա կանչում է քեզ: Նա քեզ է կանչում»: Այդ ամբոխի միջից Նա կանչեց նրան:

Նա հիմա նույն բանն է անում: Արդյոք սա ներթափանցո՞ւմ է: Հասկանո՞ւմ եք:

136 «Վարդապետն է եկել և կանչել է քեզ»: Եվ Նա կանչեց նրան կուրությունից դեպի լույս, խավարից դեպի լույս: Եվ Նա կանչեց նրան, անցավ մահից դեպի Կյանք: «Վարդապետը եկել է և կանչում է քեզ»: Եվ երբ կանչեց նրան, վերադարձրեց նրա տեսողությունը:

137 Արյան խնդիր ունեցող խեղճ կինը մի անգամ բլուրի վրա, իր ողջ դրամը ծախսել էր բժիշկների մոտ: Նա, անկասկած, նրանք վաճառել էին լծասայլը, վաճառել էին ֆերման, գրավ էին դրել: Նրանք ծախսել էին ամենը, ինչ կարողացել էին բժիշկների վրա և նրանցից ոչ ոք չէր կարողացել բժշկել նրան: Նա շարունակ վատանում և

վատանում էր։ Արյունահոսությունը չէր դադարում։ Այն շարունակ հոսում էր ու հոսում, նրա վիճակը գնալով ավելի էր վատանում։

138 Եվ մի օր մինչ այնտեղ նստած բլուրի վրա շյուղերով գործում էր, ուր ապրում էր, նայեց ցած՝ հովտին և տեսավ, թե ինչպես մի նավ մոտեցավ։ Բոլորը սկսեցին վազել. «Օվսա՜ննա Մարգարեին»։

139 Նա լսել էր Նրա մասին։ Հավատքը գալիս է լսելուց։ Նա ասաց. «Իջնեմ և նայեմ Նրան»։

140 Եվ երբ նա գնաց այնտեղ և առաջին անգամ տեսավ մարմնով հայտնված Աստծո Խոսքը, ինչ-որ առանձնահատուկ բան կար Նրա խոսքի և հայացքի մեջ, որի շնորհիվ նա հասկացավ, որ այդ Նա էր։ Այո՛, պարո՛ն։ «Ա՜խ, եթե միայն կարողանայի ինչ-որ ձևով գրավել Նրա ուշադրությունը, եթե միայն կարողանայի ինչ-որ ձևով դիպչել Նրան»։ Եվ նա ամբոխի միջով անցավ և դիպավ Նրա հանդերձին։

141 Հիմա հիշե՛ք, դա նրա մատը չէր, որ Հիսուսը զգաց։ Ո՛չ, պարո՛ն, որովհետև պաղեստինյան հագուստը ազատ է կախվում։ Եվ Նա...նրանք ա...

Պետրոսն ասաց. «Բոլորը դիպչում են Քեզ»։

142 Նա ասաց. «Բայց սա մի այլ ձևի հպում էր։ Ես զգացի, որ թուլացա»։

143 Հիսուսն էր եկել։ Նրա դրամը վերջացել էր, ամեն բան վերջացել էր, բայց այդ մութ ժամին, երբ արյունահոսությունը չէր դադարում, և բժիշկները չէին կարողանում կանգնեցնել այն, Հիսուսը եկավ։ Եվ ի՞նչ արեց Նա։ Կանչեց նրան։ Հայացքով փնտրեց, մինչև գտավ նրան և ասաց. «Դու արյունահոսություն ունեիր, բայց այն դադարեց»։

144 «Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան»։ «Վարդապետն է եկել և կանչում է քեզ։ Նա եկել է և կանչել է»։ Նա վերադարձրեց նրա առողջությունը։

145 Զրհորի մոտ կանգնած խեղճ կինը, որի մասին խոսում էինք անցած եկեկո, բոլոր հույսերը մարել էին։ Միգուցե, գուցե նրա հինգերորդ ամուսինը լքել էր նրան, և այդ երեկո ընդունել էր վեցերորդին, և նա, նա մի քիչ կասկածում էր նրա հարցում։ Բարոյապես նա վերջացած էր։ Նա ուզում էր իսկական լեդի լինել, նա, անկասկած, նա կարդում էր Աստվածաշունչը։

146 Եվ ահա նա գնում էր այնտեղ, գալիս է մոտավորապես ժամը տասնմեկին: Նա չէր կարող վաղ առավոտյան գալ, երբ արդար կանայք էին գալիս: Նրանք ջրով կուժը դնում էին գլխների վրա և գնում էին: Այդ պատճառով նա չէր կարող գալ, խառնվել նրանց հետ: Այդ ժամանակ նրանք, նրանք սահմանափակումներ ունեին այդ հարցում, ճիշտն ու սխալը չէին խարնվում իրար հետ: Անբարոյականը մնում էր իր տեղում, դրա համար նա չէր կարող գալ մնացածների հետ: Թույլ չէին տա, որ գար: Այսպիսով այն բանից հետո, երբ բոլորը վերցրեցին իրենց ջրերը և հեռացան...Նա եկավ ավելի լավի հետևից:

147 Եվ այդ ժամանակ նա եկավ այդ դույլով գլխի վրա դրված, կասկած չկա, որ գալիս էր մտածելով. «Հիմա, այդ տղամարդը, ում հետ ամուսնացա կամ որին պահեցի անցած երեկո, ես կասկածում եմ նրա հաշվով: Նա տղամարդ է, նա իրեն այնքան կասկածելի է պահում: Ես, ես ուղղակի չգիտեմ նրա հաշվով: Ես հնարավորություն չունեմ: Ես վտարված եմ հասարակությունից: Ես չեմ կարող գնալ այդ եկեղեցիները, նրանք չ...Մի դրա՛նց նայեք: Ես չգիտեմ, թե ինչ անեմ: Ես վշտի մեջ եմ: Ես կարդացել եմ Աստվածաշունչը. անշուշտ, մի օր այդ Մարգարեն գալու է ասպարեզ: Գիտեմ, նրանք պնդում են, թե այդպիսի բան չկա, և մինչ այդ դեռ «Գուցե հարյուր տարի, և հազար տարի կա: Հազարավոր տարիներ մենք սպասել ենք դրան և դա դեռ տեղի չի ունեցել, դրա համար մենք հիմա չենք սպասում այդ բանին»: Ամեն բան այսպես է՝ «Ո՛հ, ոչ, մենք ունենք եկեղեցիներ և նման բաներ: Մենք հիմա այդպիսի բաների կարիքը չունենք»: Այսպես նա մտքերի մեզ սուզված գնում էր այնտեղ:

148 Դուք գիտեք, որ երբ մտածում եք Նրա մասին, հենց այդ ժամանակ է, որ Նա հայտնվում է ձեզ: Ինչպես ասում էինք անցած երեկո, երբ նրանք Էմմաուսի ճանապարհին էին:

149 Երբ նա մտածում էր այդ բաների մասին, լսեց, թե ինչպես մի Մարդ ասաց. «Ինձ ջուր տուր, խմեմ»:

150 Ի՞նչ կասեք դրա մասին: Նրա ամենամութ ժամերին, երբ նրա բարոյականությունը քայքայված էր: Գուցե գեղեցիկ, երիտասարդ տիկինն ուղարկվել էր փողոց, որ այդպես ապրի: Երբեմն դա երիտասարդ աղջկա մեղքը չէ, այլ նրա ծնողներինն է, որ թույլ են տալիս նրան այդպես դուրս գալ: Եվ ահա նա այնտեղ էր, գուցե նրա գանգուրները կախված էին. նա սպասված էր, գնում էր,

ձանձրացած, և ոչ ոք չէր ցանկանում որևէ գործ ունենալ նրա հետ, երեխա, և գուցե մի մեծ պատմություն էր թաքնված դրա հետևում:

151 Ամեն դեպքում ես մի բան գիտեմ՝ նա կարդացել էր Աստվածաշունչը և հավատում էր Դրան: Եվ նրա սրտի խորքում փոքրիկ մի սերմ էր գտնվում, ասում է. «Եթե դա երբևէ կատարվի, ես կիմանամ»: Նա նախասահմանված էր դրա համար:

152 Նայե՛ք այդ ստոր Հուդային, որ կանգնած էր այնտեղ և այդպես վարվեց: Նրա սրտի խորքում խավար էր: Լույսը փայլում էր նրա գործերի մեջ, բայց սրտի խորքում նա չէր հավատում Դրան: Իսկ ահա այս կինը...Հասկանում եք, Լույսը չի կարող հասնել դրան: Բայց ահա նա հավատում էր, նա հավատում էր Դրան, բայց նրա կյանքը խավարի մեջ էր, երբ Լույսը հարվածեց, ցրեց խավարը: Բայց երբ Լույսն այստեղ հարվածեց, ամենը խավարեց: Դա է տարբերությունը:

153 Հասկանում եք, նա այդ նպատակով էր ծնվել: Նա, նա ասաց, երբ Հիսուսը նրան ասաց, թե քանի ամուսին է ունեցել, նա...Ի՞նչ կատարվեց: Հանկարծ նա ոգևորվեց: Նա ճգնաժամային իրավիճակում էր: Նա ասաց. «Տե՛ր, տեսնում եմ, որ Դու մարգարե ես: Ես գիտեմ, որ երբ Մեսիան գա, կանի այս գործերը»:

154 Այդ ժամանակ Նա կանչեց նրան: Այդ ժամանակ Նա կանչեց նրան: «Ես Նա եմ, Նա, որ քեզ հետ խոսում է»: Նա ճանաչեց դա Աստծո Խոսքի միջոցով: Նա կանչեց նրան իր մեղքերից դեպի Կյանք: Եվ նրա անունը գրված է Աստվածաշնչում, և այսօր նա հավիտենական կյանք ունի:

155 Աստված կարող է նույն ձևով քեզ կանչել, որովհետև Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

156 Այո՛, նրա բարոյականությունը քայքայված էր, բայց և այնպես նա հասկացավ, որ Հիսուսն ուներ այդ զանազանությունը: Նա գիտեր, որ դա պետք է լիներ Մեսիան: Այն ժամանակ, երբ Հիսուսն ասաց. «Ես Նա եմ, Ես Նա եմ», նա հասկացավ, որ դա այդպես էր:

157 Մի անգամ աշակերտները գտնվում էին նավի վրա, բոլոր հույսերը մարել էին: Փոթորիկները...նրանք գնացել էին առանց Հիսուսի, և փոթորիկները ճիշտ, ճիշտ այնպիսին էին, ինչպես Ղազարոսի տանը: Բոլոր հույսերը մարել էին: Հին նավակը ջրասույզ էր լինում: Նրանք աղաղակում և գոռում էին, և գուցե աղոթում էին

և այդպես շարունակում, կայծակը փայլատակում էր, ջուրը նավակի մեջ էր լցվում, կայմի ձողերը ընկնել էին, թիակները կոտրվել էին և նրանք իրարից բռնաց աղաղակում էին։

158 Եվ այդ ամենամութ ժամին, այդ ժամանակ Հիսուսը քայլելով նրանց մոտ եկավ։ Բայց Նա ուրվականի նման էր նրանց համար։ Նա ուրվականի նման վախենալու տեսք ուներ, և նրանք վախից աղաղակեցին։

159 Ահա թե ինչն է խնդիրն այսօր։ Հիսուսը գալիս է ձեր մութ ժամին, իսկ դուք վախենում եք Դրանից։ Դուք չգիտեք, թե ինչ է Դա։

160 Նրանք չգիտեին՝ ինչ էր Նա։ Նրանք ասացին. «Ո՛հ, սա ուրվական է»։ Նրանք աղաղակում էին։

161 Եվ այդ ժամանակ Նա կանչեց նրանց և ասաց. «Ես եմ, մի՛ վախեցեք»։ Ամենամութ ժամին Հիսուսը՝ նրանց Օգնությունը, եկավ։ Նա միշտ այդպես է անում, գալիս է ամենամութ ժամին։ Այդ ժամանակ Հիսուսը եկավ և հայտնեց Իրեն, և եկավ նրանց մոտ։

Պետրոսն ասաց. «Եթե Դու ես, հրամայի՛ր ինձ, որ ջրի վրայով գամ»։

Հիսուսն ասաց. «Ե՛կ»։

162 Գիտեք ի՞նչ, բարեկամներ։ Շուտով Նա գալու է նրանց հետևից այս վերջին օրերում։ Հիմա, մի՞թե տարօրինակ չէ, որ եկեղեցին նորից հայտնվել է այս մութ ժամում։

163 Ես այստեղ մի բան կասեմ։ Սա ուսմունք չէ։ Ես պարզապես մարգարեանում եմ։ Գիտե՞ք՝ ինչ կատարվեց։ Շուտով կհասնի այն կետին, հիշե՛ք խոսքս, որ բոլոր հարանվանությունները ստիպված կլինեն միանալ էկումենիկ խորհուրդին։ Եթե չմիանան, չեն ստանա Խորհուրդի աջակցությունը։ Դրա համար բոյկոտ է լինելու, և ոչ ոք չի կարողանա գնալ այս եկեղեցիները, կամ գնալ որևէ եկեղեցիներ. եթե ձեր սեփական եկեղեցուց նշանը չունենաք, չեք կարողանա գնել կամ վաճառել։ Տեսնո՞ւմ եք, ինչպես որ եղել է, նորից այդպես է լինելու, գազանի դրոշմը։ Եվ եկեղեցին՝ հոգևոր մարդիկ, գիտակցում են դա։

164 Դուք էլ հոգեգալստականներդ ամեն դեպքում գիտակցում եք դա։ Սկսել եք դա զգալ։ Երբ ձեր եկեղեցիները՝ Հոգեգալստական կազմակերպություններից շատերը. կարիք չկա, ձեր անուններն ասելու, բայց դուք գիտեք, որ հենց հիմա

նրանք, նրանք մտնում են դրա մեջ: Նրանք վկայել են, որ մտել են: Եվ երբ դուք այդ անեք, ի՞նչ եք ստիպված լինելու անել: Զրկվել Սուրբ Հոգով մկրտության ձեր Ավետարանական ուսմունքից: Ստիպված եք լինելու հրաժարվել Աստվածաշնչյան ուսմունքից:

165 Անդամները չեն հանդուրժելու դա: Ճշմարիտ վերստին ծնված քրիստոնյաները առաջինն են մեռնելու: Նրանք նախազգուշացված են Խոսքի միջոցով: Նրանք գիտեն, որ այս բանը մոտենում է: Այո՛, պարո՛ն:

166 Մի՞թե սա տարօրինակ չէ: Եվ հենց այս ամենամութ ժամին, այն ժամանակ է Հիսուսը գալիս և կանչում մեզ՝ ասելով. «Մի՛ վախեցեք, Ես եմ: Ես դեռևս ձեզ հետ եմ: Ես այստեղ եմ, որ հայտնեմ Իմ Խոսքը»: Ինչպիսին Նա եղել է այն ժամանակ, այնպիսին էլ հիմա է: Նա ասել էր, որ անելու է դա: Ո՛հ, Աստված իմ: Վարդապետը եկել է և կանչել է մեզ:

167 Շատ հիվանդ մարդիկ այստեղ, անկասկած, նստած են այստեղ, և բժիշկը ձեզ ասել է, որ ոչ մի, ոչ մի հույս չկա ձեզ համար: Գուցե դուք գտնվում եք ձեր ամենամութ ժամում, բայց հիշե՛ք՝ Վարդապետը եկել և կանչել է ձեզ:

168 Եվ մի օր, մի օր Վարդապետը գալու է և կանչելու է ամեն անուն, որ գրված է Գառան Կյանքի Գրքում: Եթե քո անունն այստեղ չէ, հիմա գրիր այնտեղ, որովհետև Նա գալու է և կանչելու է: Նույնիսկ նրանք, ովքեր գերեզմաններում են, Նրա ձայնը կլսեն և կյանքի կվերադառնան: Վարդապետը կգա և կկանչի քեզ: Եվ մինչ Նա կանչում է այսօր, պատասխանեք և պատրաստվեք այդ Օրվան. սա է իմ խորհուրդը ձեզ:

169 Այս ժամանակաշրջանի խոստումը, Նա խոստացել է, որ կլինի այստեղ: Այն գործերը, որոնք Նա արել է, նորից է անելու, և հիմա կրկին Վարդապետը եկել է և կանչում է քեզ:

170 Խոնարհենք մեր գլուխները: Ես այստեղ մոտավորապես վեցից ավելի էջեր ունեմ, բայց ես, ես չեմ կարող հիմա հասնել դրանց: Խոնարհենք մեր գլուխները: Ես խոստացել էի շուտ բաց թողնել ձեզ, բայց արդեն քառորդն անցել է:

171 Երկնային Հայր, ո՛վ Տեր, թող սա նորից կատարվի: Այս բոլոր բաները, որ ես ասացի. «Հիսուսը եկել է և կանչում է քեզ»: Ի՞նչ է Նա անում, երբ գալիս է: Կանչում է: Եվ թող սա նորից կատարվի, Տե՛ր: Թող Քո Սուրբ

Հոգին՝ Տեր Հիսուսը, Հոգու տեսքով իջնի մարդկանց մեջ այս երեկո: Թող Նա գա այս երեկո և բացահայտի Իրեն, իսկ հետո դրսևորի Իրեն: Այդ մարդկանց նման, ինչպես նրանք հավատացին, մենք էլ կհավատանք, Տե՛ր: Այստեղ շատերը կան, ովքեր գուցե երբեք այս հնարավորությունը չեն ունեցել: Մենք խնդրում ենք, որ նորից շնորհես դա նրանց այս երեկո: Որովհետև մենք այդ խնդրում ենք Աստծո փառքի համար Հիսուսի Անունով: Ամեն:

172 Ճիշտ է, քույր, շարունակե՛ք այդպես: Դա հրաշալի է: Ծարունակե՛ք այդպես: Ո՛հ, շատ հանդարտ է, բոլորը:

173 Հավատո՞ւմ եք, որ Նա եկել է: Նա եկել է: Արդյոք Նա դեռևս կանչո՞ւմ է, երբ գալիս է: Հիմա եթե պարզապես միայն հավատաք: Եթե պարզապես միայն հավատաք Աստծո Խոսքին, Աստված կշնորհի դա:

174 Հիմա նայե՛ք, ես այստեղ աղոթքի շարք կանչելու ժամանակ չունեցա: Ես կանչելու եմ նրանց այնտեղ այս երեկո, եթե Տերը կամենա: Վարդապետը եկել է: Նա եկել է իրականացնելու Իր Խոսքը այս վերջին օրերում: Եվ ինչպիսին որ Նա այն ժամանակ էր, նունն էլ այսօր է: Ինչպիսին որ Նրա հայտնությունը կամ նույնացումն էր այն ժամանակ, այնպիսն էլ այսօր է, որովհետև Նա դեռևս Աստծո Խոսքն է: Հավատո՞ւմ եք դրան: Իսկ Աստծո Խոսքը սրտի մտքերն ու խորհուրդները քննող է: Ինչ կերպ որ Նա արել է այն ժամանակ էր, նույն կերպ էլ միշտ արել է: Նա դեռևս նույնն է: Եթե Նա հիմա անի այդ, կհավատա՞ք Նրան: Դա կմղի՞ ձեզ հավատալու Նրան:

175 Դուք, որ հիմա այնտեղ եք, նախ թույլ տվեք տեսնեմ, արդյոք կա մեկը, ում ես ճանաչում եմ, որ նստած է այստեղ՝ ինչ-որ տեղում, ում ես ճանաչում եմ:

176 *Այստեղ* շուրջը կանգնածները, ում ես անձանոթ եմ, բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, գիտեք, որ ես ոչինչ չգիտեմ ձեր մասին, և դուք հիվանդ եք, բարձրացրեք ձեր ձեռքերը: Ենթադրում եմ՝ բոլորը: Շատ լավ, հիմա, դուք հավատում եք: Պարզապես հավատացե՛ք ձեր ողջ սրտով: Մի՛ կասկածեք: Հավատք ունեցե՛ք: Հավատացե՛ք Աստծուն:

177 Կխնդրեմ, որ իսկապես հանդարտ լինեք, նստած մնացեք: Այս ու այն կողմ մի՛ գնացեք, խնդրում եմ, մի՛ արեք այդպես: Հասկանո՞ւմ եք: Հասկանո՞ւմ եք: Դուք հոգի, շունչ և մարմին եք: Եվ ձեր հոգին…Եվ Սուրբ Հոգին շատ նուրբ է:

178 Քանի՞սն են հիշում շատ տարիներ առաջ, որ Սուրբ Հոգին, երբ ես բարձրացա այստեղ և ձեզ ասացի։ Երբ ես բռնում եմ մարդկանց ձեռքը, Նա ասաց ինձ, որ այս զանազանությունը գալու է, այնուհետև շարունակվեց։ Հիշո՞ւմ եք, հիշո՞ւմ եք դա։ Բայց Նա ասաց. «Եթե կարողանաս այնպես անել, որ մարդիկ քեզ հավատան»։ Հիշո՞ւմ եք այդ օրերը, տարիներ առաջ։ Դուք պետք է հավատաք։

179 Ես տեսա մի տղամարդու, կարծեմ դա ուրիշ հավաքույթին էր, այստեղ, նա նստած էր անմիջապես այնտեղ։ Եվ Սուրբ Հոգին…Ես հետևում էի նրան քարոզելու ժամանակ։ Նա հաշմանդամ էր։ Թևերի տակ հենակներ ուներ։ Եվ հենց այն ժամանակ, երբ ես սկսեցի կանչել, Սատանան մոտեցավ այդ տղամարդուն, սև ստվեր։ Ես դրան հետևում էի իմ սեփական աչքերով։ Նա վեր կացավ և դուրս եկավ։ Նա ընդմիշտ հաշմանդամ կմնա, հասկանում եք։ Ուստի նա, այն ժամանակ, երբ կարող էր այնտեղ բժշկվել, եթե նա պարզապես, պարզապես…Հասկանո՞ւմ եք։ Բայց ուղղակի ես չգիտեմ, թե ինչու։ Կարծում եմ, որ նա պարզապես լսեց թշնամուն։ Բայց եթե դուք կանգնեիք և հետևեիք այդ ստվերներին, տեսնեք այդ բաները այն տեսքով, ինչպիսին որ են, և հետևեք, թե ինչպես են նրանք գործում։ Հասկանում եք, դա կլիներ…

180 Հիմա, ես չեմ կարող բժշկել։ Այն մարդը, ով ասում է, որ կարող է ձեզ բժշկել, սխալվում է։ Դուք արդեն բժշկված եք։ Բայց սա Հիսուս Քրիստոսի ներկայության ճանաչումն է։ Հիմա, եթե Մարթան գիտեր, որ եթե նա դարձյալ կարողանար տեսնել Նրան, կստանար իր փափագը, որովհետև Ինքը հայտնված Խոսքն էր, մի՞թե մենք չենք կարո՞ղ այդ չափ հավատալ այս երեկո, որ հավատանք դրան։ Իհարկե, մենք պետք է հավատանք։ Նա եկել է։ Նա եկել է, Նա եկել է Սուրբ Հոգու տեսքով։ Ահա թե Ով է Նա։ Հիմա պարզապես աղոթե՛ք։

181 Հասկանում եք այստեղ գտնվողներդ, եթե ինչ–որ մեկը կանգնած լիներ այստեղ, ամնիջապես այստեղ՝ իմ կողքին, պարզապես, պարզապես աղոթեր. դուք տեսնում եք, այսքան մարդիկ աղոթում են, ողջ շենքով մեկ։ Դուք պարզապես պետք է հետևեք դրան։ Դուք չեք կարող ասել. «Ասե՛ք Բրանհամ եղբայր…»։ Ո՛չ, պարո՛ն։ Ես, ես չէի կարողանա դա անել, նույնպես էլ դուք չեք կարող անել այնպես, որ ես երազ տեսնեմ։ Հասկանո՞ւմ եք։ Հնարավոր

է, որ դուք երազ տեսնեք։ Դուք, Աստված կարող էր այնպես անել, որ դուք երազ տեսնեք իմ մասին, դուք հավատում եք դրան, բայց ինքներդ անել դա չեք կարող։ Դուք չեք կարող ասել. «Բրանհամ եղբայր, ես հիմա երազ կտեսնեմ ձեր մասին»։ Ո՛չ, դուք չեք կարող դա անել։ Ոչ էլ ես կարող եմ տեսիլք տեսնել։ Նա, ով երազ է տալիս քեզ, միակն է, որ պետք է դա անի։ Նույն ձևով էլ տեսիլքի պարագայում է։

182 Տեսնում եմ մի տղամարդու, որը նստած է այնտեղ՝ շարքի ծայրում, արտրիտով։ Եթե նա իր ամբողջ սրտով հավատա, Աստված նրան կբշկի արտրիտից։ Հավատո՞ւմ եք, որ Նա կանի դա, պարո՛ն։ Այնտեղ է նստած, մեքսիկացի է, նստած է շարքի ծայրում, կհավատա՞ք դրան։ Լավ, պարոն։

183 Ձեր կողքին նստած կինը նույնպես արտրիտ ունի։ Հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ կբժշկի, տիկին։ (Արձագանքո՞ւմ է *սա։* Վախենում եմ, որ մարդիկ չեն լսում դա)։ Լսո՞ւմ եք։ Լավ։

184 Ի՞նչ կասեք նրա կողքին նստած մեքսիակացի մյուս կնոջ մասին։ Նա տառապում է ստամոքսի հիվանդությամբ։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել ձեր ստամոքսը, տիկին։

185 Նա ստացավ դա։ Երբ տեսնում եմ, որ Լույսն իջնում է, դա նշանակում է, որ այն կատարվեց։ Այո։ Ահա՛։ Այն հարվածեց նրան։ Այն այնտեղ էր, պտտվում էր շուրջը... [Դադար ժապավենի վրա. Ծան. խմբ]...որ անում է դա։ Հասկանո՞ւմ եք։ Երբ Նա կարող է հավա՛տք գտնել։ Տեսնում եք՝ «Նա շատ գործեր չկարողացավ անել նրանց անհավատության պատճառով»։

186 Ահա մի կին, որ նստած է այստեղ, աղոթում է, անմիջապես այստեղ։ Նա վախեցած է։ Պետք է վախենա։ Նրա մոտ քաղցկեղային վիճակ է, շատ լուրճ է։ Ես ձեզ չեմ ճանաչում, բայց Աստված ճանաչում է ձեզ։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ պատմել այս քաղցկեղի կամ մեկ այլ բանի վերաբերյալ։ Նայե՛ք ինձ։ Այնտեղ աղոթողներն այնքան շատ են, հասկանում եք, դրա համար ես ասացի դա։ Նայե՛ք մեզ։ Հիմա, այո, դուք այստեղից չեք, սա ձեր տունը չէ։ Դուք Պորտերվիլ կոչվող վայրից եք, Կալիֆոռնիայից։ Դա ճիշտ է։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ ասել, թե ով եք դուք։ Նա գիտի։ Ձեր անունն է տիկին Վինթրմ։ Դա ճիշտ է։ Հիմա հավատացե՛ք, և քաղցկեղը կհեռանա ձեզանից։ «Եթե

կարող եք հավատալ»։ Դա է այն ամենը, ինչ Աստված խնդրում է, որ դուք անեք։ «Եթե կարող եք հավատալ»։

187 Մի՞թե չեք հավատում դրան ձեր ողջ սրտով։ Ինչ-որ մեկը այս բաժնում՝ *այստեղ,* չե՞ք կարող հավատալ։ Վարդապետը եկել է և կանչել է ձեզ։ Նա կանչում է ձեզ մահից դեպի կյանք, հիվանդությունից դեպի առողջություն։

188 Այստեղ՝ խորքում մի տղամարդ է նստած, խոնարհած գլուխով, աղոթում է։ Նա իրականում իր համար չի աղոթում, այլ՝ ուրիշի։ Աղջիկ է։ Դա նրա դուստրն է։ Հավատո՞ւմ եք, պարո՛ն։ Դուք ունեք ոտքիերի հետ կապված խնդիր։ Ունեք նաև ծնկի հետ կապված խնդիր։ Դա ճիշտ է։ Լաց լինելու կարիք չկա, դա Նա է այնտեղ՝ ձեր կողքին։ Ձեր դուստրը հիվանդանոցում է, այդպես չէ՞։ Թոքախտ է։ Դուք հավատում եք։ Հավատո՞ւմ եք։ Վարդապետը եկել է և կանչում է նրան։ Կհավատա՞ք որպես նրա հայրը։ Կհավատա՞ք։ Թող Նա այս երեկո այցելի նրան և ձեզ։ Թող դա ավարտվի։

189 Ահա փոքրիկ մի տղա, փոքրիկ թուխ մաշկով տղա է։ Նա տառապում է մաշկային հիվանդությունով և ասթմայով, փոքրիկ մեքսիկացի տղա է, մեքսիկացի տղա, որը նստած է այնտեղ։ Նա այստեղից չէ, Սան Խոսեից է։ Հավատո՞ւմ ես, որդիս։ Մեկ բան էլ. քո հայրն այստեղ քեզ հետ է։ Նա սպասավոր է։ Դա ճիշտ է։ Հավատո՞ւմ ես, որ Աստված կարող է ինձ ասել քո անունը։ Դա կմղի՞ քեզ իսկապես ուժգին հավատալու։ Քո անունը Ռուբեն է։ Հիմա հավատա՛։ Ըհը։ Աստված քեզ առողջ կդարձնի։

190 Վարդապետը եկել է և կանչում է քեզ։ Ո՛հ մեղավոր, ո՛հ հիվանդ մարդ, մի՞թե չես տեսնում Վարդապետին դրսևորված մարդկային էակների մեջ հավատացյալների միջև։ Նա եկել է, որ կանչի Իր հավատացող զավակներին դեպի առողջության։ Նա եկել է, որ կանչի մեղավորին զղջման։ Խոտորվա՛ծ, եկեղեցո՛ւ անդամ, Վարդապետը եկել է և կանչում է քեզ։

191 Հավատո՞ւմ եք դրան։ Հավատո՞ւմ եք դրան ձեր կարիքի համար հիմա։ Եթե հավատո՞ւմ եք, բարձրացրե՛ք ձեր ձեռքը և ասե՛ք. «Ես հավատում եմ իմ կարիքի համար»։ Ուրեմն կանգնեք հիմա և ընդունեք դա։ Վարդապետը եկել է և կանչում է քեզ։ Ով էլ որ լինես, ինչ կարիք էլ, որ ունենաս, Վարդապետը եկել է և կանչում է ձեզ։ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան։

192 Այն խեղճ կինը մտավ քաղաք և ասաց. «Եկե՛ք, տեսե՛ք մի Մարդու, Ով ինձ ասաց, թե ինչն այնպես չէր»: Դուք քաղաք չէք մտել: Դուք ինքներդ եկել եք և տեսել եք դա, ուստի Վարդապետը եկել է և կանչում է քեզ:

193 Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, փառք տվեք Նրան և ասե՛ք. «Տե՛ր Հիսուս, ես մեղավոր եմ, ների՛ր ինձ: Ես խոտորված եմ, ետ ընդունիր ինձ, Տե՛ր: Ես Սուրբ Հոգու կարիքն ունեմ, լեցրո՛ւ ինձ: Ես հիվանդ եմ, բժշկի՛ր ինձ: Ես հաշմանդամ եմ, առողջացրո՛ւ ինձ»: Վարդապետը եկել է և կանչում է քեզ: Բարձարցրե՛ք հիմա ձեր ձեռքերը և փառք տվեք Նրան: Ամեն:

194 (Այստեղ մեզ մի փոքր տոն տվեք՝ «Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան»: Գիտե՞ք: *Կփառաբանեմ Նրան:* Գիտեք այս երգը, այնպես չէ՞):

Հավատո՞ւմ եք:

Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան,
Ո՛հ, փառաբանեք մեղավորների համար մորթված Գառնուկին,
Փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ:

195 Սիրո՞ւմ եք Նրան: Չե՞ք ուզում հիմա երգել Նրան, մինչ Նա այստեղ է: Նա Հոգի է, որ շրջում է շենքի միջով: Նա գիտի ձեր սիրտը, գիտի ամեն բան ձեր մասին: Եկե՛ք մեր ողջ սրտով երգենք այս երգը Նրա համար:

Կփառաբանեմ Նրան...

Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, երբ երգում եք:

Կ...

Հիմա պարզապես փառաբանե՛ք Նրան:

...կփառաբանեմ Նրան,
Ո՛հ, փառաբանե՛ք մեղավորի համար մորթված Գառնուկին,
Ո՛հ, փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ:

196 Ո՛հ տիկին, դուք, որ շարժասայլակում եք, եթե հիմա մի փոքր ավելի շատ հավատաք այնտեղ:

Կ...

Եկե՛ք և՛ս մեկ անգամ փորձենք: Ես մի բանի եմ սպասում:

Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան,
Ո՛հ, փառաբանեք մեղավորների համար մորթված Գառնուկին,
Փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ։

197 Հիմա, մինչ մենք նորից ենք երգում այս երգը, շրջվեք, բռնեք մեկի ձեռքը, մինչ երգում ենք. երգե՛ք՝ «Կփառաբանեմ Նրան»։ Միացե՛ք, հիմա բոլորս միասին։

Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան,
Փառաբանեք մեղավորների համար մորթված Գառնուկին,
Փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ։

198 Ո՛հ մեղավոր բարեկամ, չե՞ս ուզում հիմա բարձարանալ այստեղ։ Բարձրացե՛ք և բոլորդ փառք տվեք Նրան։ Բոլորը, ովքեր ցանկանում են դավանել Նրան որպես Փրկիչ։ Նրա ներկայության մեջ, մինչ սուրբերը Հոգով երկրպագում են, չէի՞ք գա այստեղ և կանգնի։ Ասե՛ք. «Ես ուզում եմ վկայել այսօր։ Ես ուզում եմ փառք տալ Նրան։ Ես ուզում եմ գալ։ Ես չեմ ամաչում Նրանից։ Ես ուզում եմ, որ աշխարհն իմանա, որ ես հենց այստեղ ընդունում եմ Նրան որպես իմ Փրկիչ, մինչ Նա ներկա է»։ Եկե՛ք, մինչ երգում ենք այս երգը.

Կփառաբանեմ Նրան…

Չե՞ք ուզում գալ։

…կփառաբանեմ Նրան,
Ո՛հ, փառաբանե՛ք մեղավորների համար մորթված Գառնուկին,
Ո՛հ, փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ։

199 Ո՛հ, ճիշտ է, տիկին, եկե՛ք։ Էլի ո՞վ կգա Քրիստոսի ներկայության մեջ։ Բարձարցե՛ք այստեղ, քույր, կանգնե՛ք այստեղ։

200 Մեկ այլ մարդ, ով ցանկանում է, որ Նա հենց հիմա դառնա իր Փրկիչը, ով չի ամաչում։ Նա ասաց. «Եթե Ինձանից ամաչեք մարդկանց առաջին, Ես էլ ձեզանից կամաչեմ Իմ Հոր և սուրբ հրեշտակների առաջին»։ Եթե հիմա չէք ամաչում Նրանից, և ուզում եք, որ Նա ձեր Փրկիչը դառնա, մինչ Նա այստեղ է։ Դուք տեսաք Նրան։

Սա այնքան կատարյալ է, Խոսքն Ինքն է դա հայտնում: Մոտեցե՛ք, մինչ սուրբերը երկրպագություն են անում: Չե՞ք ուզում գալ:

201 Աստված օրհնի ձեզ, պարոն: Ահա մոտենում է տարեց տիկին, արդեն տարիքի մեջ է: Չէ՞ք ուզում հիմա գալ:

Կ...

Երգե՛ք հիմա:

...կփառաբանեմ...

202 Դա ճիշտ է, երիտասարդներ, մոտեցեք այստեղ մոտիկ: Պարզապես փառաբանեք: Աստված օրհնի ձեզ, տիկին, հենց այդպես պետք է դա անել: Աստված օրհնի ձեզ, երիտասարդներ:

...մեղավորներին համար մորթված...
Փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ:

203 Մինչ ծառայողները հիմա մոտենում են այս մարդկանց, չի՞ ուզում էլի որևէ մեկը գալ: Խոտորվա՛ծ, չէի՞ր գա և ասի. «Ես ամաչում եմ իմ կյանքի համար»: Նա այստեղ է: Հավատո՞ւմ եք, որ ես Աստծո ծառան եմ: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը: Հիսուս Քրիստոսը մեր մեջ է: Չե՞ք ուզում գալ:

Փառք տվեք Նրան...

Չէ՞ք ուզում գալ և փառք տալ Նրան:

...մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց...

204 Մարթա գալի՞ս ես, թե՞ Մարիամի հետ տանն ես նստելու: Արդյո՞ք պատրաստվում ես մնալ ինչ-որ կազմակերպության մեջ և ասել. «Ո՛հ, իմ եկեղեցին Դրան այսպես չի հավատում», ե՞րբ Քրիստոսը դրսևորվեց: Արդյո՞ք պատրաստվում ես հետ նստել և ասել դա, թե՞ դուրս ես գալիս: «Ասեմ ձեզ, երբ ես...»: Ո՛չ: Այսօր, սա՛ է ժամը: Մահը կախված է ձեր շուրջ Հայրոսի դստեր նման:

205 Հիմա եկե՛ք: Խոտորվա՛ծ, հիմա արի՛: Մեղավո՛ր, հիմա արի՛: Սա՛ է ժամը: Վարդապետը եկել է և կանչում է քեզ: Նա կանչում է ձեզ: Դուք ասում եք. «Ինչպե՞ս իմանամ»: Նա օգտագործում է իմ ձայնը: Եթե Նա օգտագործում է իմ ձայնը հիվանդությունը, ախտերը և նման բաները հայտնելու համար, մի՞թե չգիտեք, որ Նա կանչում է նաև մեղքը: Դո՛ւրս եկեք: Եկե՛ք հիմա, սա կարող է լինել ձեր վերջին հնարավորությունը:

206 Եվս մեկ անգամ, այստեղ ավելի շատ մարդիկ կան, ովքեր պետք է գան, բարեկամնե՛ր: Ես չեմ ուզում ձեզ շփոթմունքի մեջ գցել այսպես կանչելով: Դա ճիշտ չէ: Եթե երբեմն գուցե…Այդ փարիսեցիները կարծում էին, որ նրանք փրկված են, բայց դա այդպես չէր: Դուք նույն բանն եք մտածում: Եկե՛ք հիմա:

207 Վստահ եղե՛ք: Ռիսկի մի՛ դիմեք, գնալով փոխզիջման: Եթե նվազագույն կասկած կա ձեր մտքում, առիթը բաց մի՛ թողեք: Եկե՛ք հիմա: Հիմա է ժամը, հիմա՛, մինչ Աղբյուրը բաց է, մինչ Սուրբ Հոգին այստեղ է: Վարդապետը եկել է: Այդ փոքրիկ կասկածը, որ Նա փորձում է քեզ ասել, սա է՝ «Դու կասկածում ես»: Դադարի՛ր կասկածելուց: Ե՛կ հիմա: Վարդապետը եկել է և կանչում է քեզ: Դա ճիշտ է, պարզապես շարունակեք գալ, շարունակեք գալ:

Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան,

Չէ՞ք ուզում գալ և փառք տալ Նրան:

Փառաբանե՛ք մեզավորների համար մորթված Գառնուկին,
Փառք տվեք Նրան, ո՛հ բոլոր մարդիկ,
Քանզի Նրա Արյունը ջնջեց ամեն բիծ:

208 Հիմա, մինչ մեղավորները գալիս են՝ հանդիպելու Նրան, թող մարդիկ փառք տան Նրան, մինչ հիմա երգում ենք այս երգը: Բարձրացած ձեռքերով հիմա բոլորդ միասին երգեք ի փառք Նրան:

Կփառաբանեմ Նրան, կփառաբանեմ Նրան,
Փառաբանեք մեղավորների համար մորթված Գառնուկին.

209 Պարզապես փա՛ռք տվեք Նրան: Այստեղ կանգնածներդ, աղոթե՛ք և խնդրե՛ք Նրան, որ ների ձեզ: Դա հենց այն է, ինչ Նա կանի: Վարդապետը եկել է և կանչում է քեզ: Թող Աստված օրհնի ձեզ:

64-0213 Այնժամ Հիսուսը եկավ և կանչեց
«Էլլիոթ» դահլիճ
Տուլարե, Կալիֆոռնիա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org